



Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2018 թվականին
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
նազմավարության ծրագրի կատարման վերաբերյալ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----------|
| Նախաբան | 5 |
| ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է «ՈՐԱԿԻ ԵՐԱՇԽԻՔ 2018» ՄՐՑԱՆԱԿԻ | 6 |
| ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ | 7 |
| ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ | 14 |
| ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ | 18 |
| ■ Հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացում և բարեփոխումներ | 18 |
| ■ ՀՊԳ հեղինակության բարձրացում | 28 |
| ■ Անվճար իրավական օգնության տրամադրման այլընտրանքային համակարգերի ներդրում | 28 |
| ■ ՀՊԳ աշխատանքների իրականացման թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում | 30 |
| ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ. ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | 31 |
| ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | 38 |
| ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | 43 |
| ■ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԽՈՒՄԲԸ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ Է ՑՈՒՑԱԲԵՐԵԼ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ | 45 |
| ■ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԽՍՏՈՐԵՆ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆ ԱՎԱԳ ԼԱԼԱՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԽՈՂԸՆԴՈՏԵԼՈՒ ԴԵՊԲԸ | 46 |
| ■ 2018 թվականի ընթացքում փաստաբանների նկատմամբ հարուցված քրեական գործերը | 47 |
| ■ 2018 թվականի Փաստաբանների պալատի մասնակցությամբ քննվող քաղաքացիական գործերը | 48 |
| ■ 2018 թվականի Փաստաբանների պալատի մասնակցությամբ քննվող քրեական գործերը | 49 |



ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ 50

- 2018 թվականի 1-ին կիսամյակի վերապատրաստման դասընթացների արդյունավետության գնահատման վերլուծությունը 53
- 2018 թվականի 2-րդ կիսամյակի վերապատրաստման դասընթացների արդյունավետության գնահատման վերլուծությունը 55

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 59

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԴԵՊՔԵՐԸ 60

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԹԻՐԱԽԱՎՈՐՄԱՆ ԽՆԴՐԻՆ 61

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԻՐԱՎՈՐԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 63

ՓԱՍՏԱԲԱՆԻՆ ՎԻՐԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԶՐՊԱՐՏԵԼՈՒ ԱՐԱՐՔՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ 64

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՃՆՇՈՒՄՆԵՐԸ 66

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ 68

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ «ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ 79

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱԶՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ 81

- Գիտավերլուծական կենտրոն 81
- Մարզամշակութային ակումբ 81

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 83



**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ
ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ** 95

**Հավելված թիվ 1՝ Փաստաբանների նկատմամբ հարուցված
կարգապահական վարույթների վիճակագրություն** 97

**Հավելված թիվ 2՝ Փաստաբանների դեմ ներկայացրած բողոքների և
հարուցված կարգապահական վարույթների
վիճակագրություն** 98

**Հավելված թիվ 3՝ 2018 թվականին Փաստաբանների պալատի խորհրդի
կողմից քննված և ավարտված գործերի
վիճակագրություն** 101

**Հավելված թիվ 4՝ Փաստաբանների պալատի նախագահի իրավական
ակտերի վիճակագրություն** 103

**Հավելված թիվ 5՝ Փաստաբանների պալատի գործավարության
վիճակագրություն** 104

**Հավելված թիվ 6՝ Փաստաբանների պալատի խորհրդի
գործունեության վիճակագրություն** 105

**Հավելված թիվ 7՝ Հաշվետվություն՝ ՀՊԳ վարած քրեական գործերի
վերաբերյալ** 106

**Հավելված թիվ 8՝ Հաշվետվություն՝ ՀՊԳ վարած քաղաքացիական,
վարչական կամ սահմանադրական գործերի
վերաբերյալ** 111

**Հավելված թիվ 9՝ Հանրային պաշտպանի գրասենյակ դիմած
քաղաքացիներն՝ ըստ «փաստաբանության մասին»
ՀՀ օրենքով սահմանված կատեգորիաների** 115





ՆԱԽԱԲԱՆ

Հաշվետվության մեջ ներկայացված է 2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Փաստաբանների պալատ**) խորհրդի 20.12.2017թ. թիվ 26/3-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի 2018-2021 թվականների **ռազմավարության ծրագրի** (**այսուհետ՝ Ռազմավարական ծրագիր**) կատարմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ տեղեկություններ:

Փաստաբանների պալատի 2018-2021 թվականների ռազմավարության ծրագրով նախատեսված են 2018-2021 թվականների համար Փաստաբանների պալատի ռազմավարական հիմնական 12 ուղղություններ, որոնցով ներկայացված են այն նվազագույն նպատակները, որոնք Փաստաբանների պալատն իր առջև դրել է:

Սույն հաշվետվության մեջ Փաստաբանների պալատի 2018 թվականի ռազմավարական ծրագրի կատարողականը ներկայացված է ոլորտային սկզբունքով առանձնացված գլուխներով:

Սույն հաշվետվությունը հաստատվել է Փաստաբանների պալատի խորհրդի 2019 թվականի հուլիսի 9-ի թիվ 13/23-Լ որոշմամբ:





ՓԱՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԱՐԺԱՆԱՅԵԼ Է «ՈՐԱԿԻ ԵՐԱՇԽԻՔ 2018» ՄՐՅԱՆԱԿԻ



Փաստաբանների պալատը 2018 թվականի նոյեմբերի 17-ին, «Որակի Համաշխարհային Օրվա» կապակցությամբ կառավարման որակյալ համակարգերի ներդրման և արդյունավետ կիրառման համար արժանացել է «Որակի երաշխիք 2018» մրցանակին, որը Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանին հանձնել է Որակի Համառուսական կազմակերպության նախագահ, տնտեսագիտության և տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ և ՌԴ գիտության ոլորտում պետական մրցանակի դափնեկիր Գենադի Վորոնինը:

«Որակի Համաշխարհային Օրը (World Quality Day) ամենամյա միջոցառում է, որն անց է կացվում աշխարհի շատ երկրներում՝ նոյեմբերի երկրորդ հինգշաբթի օրը (այս տարի՝ նոյեմբերի 17-ին): Այդ օրվա նախաձեռնողն է Որակի Եվրոպական կազմակերպությունը (EOQ)՝ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) աջակցությամբ: Որակի Համաշխարհային օրը նշվել է դեռևս 1960 թվականից, սակայն պաշտոնապես այն հաստատվել է 1990 թվականին ՄԱԿ-ի կողմից: Վեց տարի անց, Որակի Եվրոպական կազմակերպությունը նոյեմբերի երկրորդ հինգշաբթին հայտարարեց Եվրոպական որակի շաբաթ:






ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Փաստաբանների պալատի աշխատակազմի կառուցվածքային փոփոխություններ.

Դեռևս 2016 թվականին Փաստաբանների պալատի նախագահի համապատասխան հրամանով հաստատվել էր փաստաբանների պալատի վարչակազմակերպական նոր կառուցվածքը, աշխատակազմի ոլորտային դասակարգումը և աշխատակազմի աշխատողների ծառայողական լիազորությունների (աշխատանքային գործառույթների) նոր շրջանակը, որով աշխատակազմի գործառույթները վերախմբագրվել և առավել հստակեցվել են ըստ գործունեության ոլորտների:

2018 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի աշխատակազմը գործել է ստորև պատկերված կառուցվածքով:





■ Փաստաբանների պալատի աշխատակազմում կառավարման ժամանակակից համակարգերի ներդրում.

Փաստաբանների պալատի աշխատակազմում (այդ թվում՝ հանրային պաշտպանների համար) դեռևս 2016 թվականից ներդրվել են «Mulberry» փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգը և «Էլեկտրոնային հանրային պաշտպան» համակարգը, որոնք շարունակվել են կիրառվել նաև 2018 թվականի ընթացքում:

■ «Mulberry» փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ

2016 թվականի փետրվար ամսից սկսած Փաստաբանների պալատում փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է «Mulberry» միջազգային չափորոշիչներին համապատասխանող էլեկտրոնային կառավարման համակարգով, որն առավել արդյունավետ է դարձնում փաստաթղթերի հետ առօրյա աշխատանքը: Այս համակարգի միջոցով Փաստաբանների պալատի առօրյա փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է թվայնացված ձևաչափով, ինչն ապահովում է նաև փաստաթղթավորման արխիվացումը միասնական էլեկտրոնային շտեմարանում: «Mulberry» համակարգի առավելություններից է նաև հանձնարարությունների բաշխման և կատարման ժամկետների սահմանման էլեկտրոնային ձևաչափը, ինչն արդյունավետ է դարձնում հանձնարարությունների կատարման ժամկետների վերահսկողությունը, ինչպես նաև արտացոլում է հանձնարարությունների մակագրման և կատարման ընթացքը: Այս համակարգի շնորհիվ աշխատակիցները նաև կարողանում են առանց թղթային արխիվից համապատասխան նյութեր պահանջելու, ծանոթանալ իրենց հանձնարարությանը նախորդած փաստաթղթաշրջանառությանը՝ նույն դիմողի նախկինում ներկայացված այլ դիմումներին, նույն խնդրի վերաբերյալ նախկինում տրված պատասխանված գրություններին և այլն:



■ «Էլեկտրոնային հանրային պաշտպան» համակարգ

2016 թվականից սկսած ամբողջ ծավալով գործարկվում է «Էլեկտրոնային հանրային պաշտպան» էլեկտրոնային ծրագիրը:



Էլեկտրոնային հանրային պաշտպանի ծրագրի մշակումն ու ներդնումն իրականացվել է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության (ABA ROLI) և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ:

Ծրագրի նպատակն է կենտրոնացնել և առավելագույնս արդյունավետ դարձնել ՀՊԳ գործունեությունը: Այն իրենից ներկայացնում է ՀՊԳ էլեկտրոնային կառավարման համակարգ, որն ունի ՀՊԳ գործունեության ընթացքում կիրառված փաստաթղթերի արխիվացման և հաշվետվությունների ավտոմատ գեներացման հնարավորություններ:

«Էլեկտրոնային հանրային պաշտպան» ծրագիրը հանրային պաշտպաններին հնարավորություն է տալիս, չգտնվելով աշխատավայրում, կատարել իրենց աշխատանքային որոշ գործառույթներ: Այն ամբողջական տեղեկատվական բազա է, որը թարմացվում է յուրաքանչյուր պահի:


Ծրագրով ներդրված մոդուլները հնարավորություն են տալիս բարձրացնել հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնության որակը, հաշվի առնելով համակարգի հետևյալ գործառույթները՝

- ✓ հանրային պաշտպանների աշխատաժամանակի տնտեսում և նրանց ծանրաբեռնվածության նվազեցում.
- ✓ հանրային պաշտպանի գրասենյակի կառավարումը, փաստաթղթերի կազմումը և շրջանառությունը, տեղեկատվության որոնումն ու առցանց օգտագործումը, ինչպես նաև հանրային պաշտպաններին գործերի մակագրումն ապահովող միասնական կենտրոնացված տեղեկատվական համակարգի առկայություն.
- ✓ հանրային պաշտպանի գրասենյակի գործերի (անվճար իրավական օգնություն ստանալու դիմումների) արդյունավետ բաշխում.
- ✓ հանձնարարականների (գործի) առցանց մակագրում.
- ✓ հանրային պաշտպանի գործունեության նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացում.
- ✓ հանրային պաշտպանի գործունեության վիճակագրության վարում.
- ✓ հանրային պաշտպանի կողմից ըստ տարբեր չափանիշների տրամադրվող հաշվետվությունների գեներացում.
- ✓ հաճախորդների տվյալների շտեմարանների վարում.
- ✓ տիպային փաստաթղթերի գեներացում.
- ✓ յուրաքանչյուր գործով (խորհրդատվություն, փաստաթղթի կազմում, ներկայացուցչություն, պաշտպանություն և այլն) առանձին էլեկտրոնային արխիվի վարման հնարավորություն.



- ✓ դատական նիստերի կամ դատավարական (քննչական) այլ գործողությունների վերաբերյալ օրացույցի վարում և դրանց անցկացման ժամանակի և տեղի վերաբերյալ համապատասխան հիշեցում.
- ✓ էլեկտրոնային արխիվի վարում.
- ✓ համակարգում անհրաժեշտ չափանիշներով տեղեկատվության որոնում:

Ծրագրի միջոցով ապահովվում է նաև Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ դիմումների և որոշումների կենտրոնացված և միասնական հաշվառումը, ինչպես նաև այն հնարավորություն է տալիս իրականացնել էլեկտրոնային մոնիթորինգ և վերահսկողություն մարզերի հանրային պաշտպանների կողմից գործերի վարման ժամկետների և արձանագրված արդյունքների վերաբերյալ:






Փաստաբանների պալատի աշխատակազմի աշխատակիցների թվի վերլուծություն.

2018 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ Փաստաբանների պալատում (այդ թվում՝ հանրային պաշտպանի գրասենյակում) աշխատել է **114 անձ**, որից՝

- ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմում՝ 24 աշխատող¹.
- Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատակազմում՝ 18 աշխատող.
- Հանրային պաշտպան՝ Երևան քաղաքում և մարզերում՝ 72 աշխատող (այդ թվում՝ ոչ լրիվ դրույքաչափերով աշխատող հանրային պաշտպանները):



Փաստաբանների պալատի 2012-2018 թվականների հաստիքացուցակներով միայն ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի համար նախատեսված հաստիքների քանակի համեմատական վերլուծությունը հանգում է հետևյալին.

¹ ՀՀ փաստաբանների պալատի 24 հաստիքներից 10-ի աշխատավարձի դրույքաչափի 50%-ը վճարվում է պետական բյուջեի մասին համապատասխան օրենքով հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման համար հատկացված գումարից, քանի որ այդ հաստիքների գործառույթներն ուղղված են նաև հանրային պաշտպանի գրասենյակի սպասարկմանը:



| Համեմատական ժամանակահատված | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 |
|----------------------------|------|------|------|------|------|------|------|
| Աշխատողների փաստացի քանակ | 23 | 21 * | 24 | 24 | 22 | 24 | 24 |

Նշված տվյալների վերլուծության արդյունքում կարելի է գալ այն եզրահանգման, որ վերջին յոթ տարիների ընթացքում Փաստաբանների պալատի աշխատողների միջին թվաքանակը² չի փոխվել, չնայած այն հանգամանքին, որ նույն ժամանակահատվածում շուրջ եռակի անգամ աճել է Փաստաբանների պալատի գործավարության և իրավական ակտերի վիճակագրական ցուցանիշը: Այսպես՝ **2012 թվականի** ընթացքում Փաստաբանների պալատի **մտից փաստաթղթերի քանակը կազմել է 686**, իսկ **2018 թվականին՝ 3816, այսինքն՝ 3130 հարով կամ 456%-ով ավել**: **2012 թվականին** Փաստաբանների պալատի **ելից փաստաթղթերի քանակը կազմել է 809**, իսկ **2018 թվականին՝ 1861, այսինքն՝ 1052 հարով կամ 130%-ով ավել**:

Մտից փաստաթղթերի աճի հետ մեկտեղ աճել է նաև Փաստաբանների պալատի իրավական ակտերի քանակը: **2012 թվականին** Փաստաբանների պալատի **նախագահն ընդունել է 165 որոշում**, իսկ **2018 թվականի** ընթացքում **ընդունվել է 498 որոշում՝ 2012 թվականի համեմատությամբ ավել 333 հարով կամ 201%-ով**:

Վերոնշյալ ցուցանիշներից բացի, 2018 թվականին 2012 թվականի համեմատությամբ շուրջ 735 անձով կամ 57%-ով աճել է նաև գործող փաստաբանների քանակը³:

Հատկանշական է նաև այն, որ 2012 թվականին Փաստաբանների պալատը տեղակայված է եղել Երևան քաղաքի, Զաքյան 3 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքի առաջին հարկում և Փաստաբանների պալատի կողմից օգտագործվող տարածքի ընդհանուր մակերեսը կազմել է մոտ 356 քմ, իսկ 2014 թվականի ապրիլից միայն Փաստաբանների պալատը զբաղեցնում է Երևան քաղաքի, Զաքյան 7-2 հասցեի շենքի չորրորդ հարկում գտնվող մոտ 757 քմ մակերեսով (չհաշված մյուս հարկերը և ընդհանուր օգտագործման տարածքները) տարածք՝ նախկինի համեմատությամբ գրեթե կրկնակի անգամ ավել:

² 2012 – 2018 թվականների համար միայն Փաստաբանների պալատի աշխատակազմում աշխատողների միջին քանակը կազմում է 23 աշխատող: Նշված ցուցանիշը ստացվել է յոթ տարվա աշխատողների հանրագումարը (23+21+24+24+22+24+24) 7-ի բաժանելու միջոցով:


³ 2012 թվականի դեկտեմբերի դրությամբ գործող փաստաբանների թիվը կազմել է մոտ 1270 փաստաբան, իսկ 2018 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ գործող փաստաբանների թիվը կազմել է 2004 փաստաբան:



2018 թվականին գործող փաստաբանների թիվը

2018 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ գործող փաստաբանների թիվը կազմել է 2004 փաստաբան, որից 875 կին փաստաբան (44%), իսկ 1129 տղամարդ փաստաբան (56%):

Կասեցված արտոնագրով փաստաբանների թիվը կազմել է 312 փաստաբան:





ՓԱՍՏԱՔԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

■ Փաստաբանների պալատի (այդ թվում՝ ՀՊԳ) նյութատեխնիկական բազայի արդիականացում

Փաստաբանների պալատը շարունակել է նյութատեխնիկական բազայի արդիականացումը՝ մեծ ուշադրություն դարձնելով հանրային պաշտպանի մարզային գրասենյակների գույքի և սարքավորումների արդիականացմանը:

Փաստաբանների պալատի նյութատեխնիկական բազայի արդիականացման ծրագիրն իրականացվում է նաև ՀՊԳ մարզային նստավայրերում: Յուրաքանչյուր տարի վերստին բարելավվում և նյութատեխնիկական արդի հնարավորություններով է ապահովվում ՀՊԳ առնվազն մեկ մարզային նստավայր:

Դեռևս 2015 թվականի ներդրված ընթացակարգերի համաձայն Փաստաբանների պալատում գույքի ձեռքբերման, ինչպես նաև ծառայություններից օգտվելու անհրաժեշտության դեպքում գործընկեր կազմակերպությունն ընտրվում է առնվազն երկու գնային առաջարկ ստանալու պայմանով:

■ Ֆինանսարներեսական գործունեության թափանցիկության ապահովում և հաշվետվողականություն

Յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար նախապես կազմում և Փաստաբանների պալատի խորհրդի հաստատմանն է ներկայացվում համապատասխան տարվա տարեկան բյուջեն, որտեղ առանձին հոդվածներով արտացոլված են տվյալ տարվա համար կանխատեսվող դրամական մուտքերը (եկամուտները) և հնարավոր ծախսային ուղղությունները:

Յուրաքանչյուր տարի Փաստաբանների պալատի նախագահի կողմից Փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանն է ներկայացվում տարեկան բյուջեի կատարողական հաշվետվությունը:

2017 թվականից սկսած Փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանը ներկայացվում է առավել մանրամասն հաշվետվություն, որտեղ արտացոլված են



Փաստաբանների պալատի հաշվետու տարվա եկամուտների (մուտքերի) վերլուծությունը, ծախսերի ընդհանուր վերլուծությունը, ինչպես նաև հաշվետու տարվա ծախսերի վերլուծությունն ըստ տարեկան բյուջեով նախատեսված տնտեսագիտական դասակարգման հոդվածների:



Հաշվետվությունը հրապարակվել է Փաստաբանների պալատի կայքէջում (միայն փաստաբանների հասանելիության ձևաչափով):

Փաստաբանների պալատի ֆինանսատնտեսական գործունեության թափանցիկությունն ապահովվում է կայքում առկա «Հաշվետվություններ» բաժնում (որը տեսանելի է միայն փաստաբանների համար) Փաստաբանների պալատի ֆինանսական հաշվետվությունները հրապարակելով, ինչը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր փաստաբանի ծանոթանալու Փաստաբանների պալատի ֆինանսական շարժին:

Հաշվետվությունները հրապարակվում են եռամսյակային կարգով, իսկ հետո փոխարինվում են տարեկան հաշվետվությամբ:



Փաստաբանների պալատի 2017 թվականի ֆինանսարևութական գործունեության աուդիտ.

2018 թվականի ընթացքում «Ասատրյանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն իրականացրել է Փաստաբանների պալատի (այդ թվում՝ հանրային պաշտպանի գրասենյակի) ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտ՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

Անկախ աուդիտի եզրակացությունը ներառում է Փաստաբանների պալատի 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների (այդ թվում՝ հանրային պաշտպանի գրասենյակի ծախսերի հաշվետվությունների) վիճակի մասին տեղեկություններ, ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքները, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրությունները:

Աուդիտի ընթացքում արձանագրվել է, որ Փաստաբանների պալատի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Փաստաբանների պալատի ֆինանսական վիճակը և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքն ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Փաստաբանների պալատի 2017թ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ անկախ աուդիտորական եզրակացությունը հրապարակվել է Փաստաբանների պալատի կայքի համապատասխան բաժնում⁴ միայն փաստաբանների համար հասանելիության ձևաչափով:

⁴ «Գրադարան» -> «Հաշվետվություններ» -> «Աուդիտորական եզրակացություններ»:



**«Իզի Փեյ» ՍՊԸ վճարահաշվարկային
կազմակերպության հետ
համագործակցություն**



2018 թվականի մայիսից Փաստաբանների պալատի և «Իզի Փեյ» վճարահաշվարկային կազմակերպության համագործակցության շրջանակներում մշակված ծրագրային ապահովման արդյունքում ստեղծվել է փաստաբանների անդամավճարները կամ փաստաբանների պալատին ուղղված այլ գումարները Իզի Փեյ համակարգի ցանկացած տերմինալով վճարելու հնարավորություն:

Իզի Փեյ վճարային տերմինալի միջոցով կարող են կատարվել փաստաբանների պալատին ուղղված հետևյալ վճարումները.

- ✓ փաստաբանի անդամավճար.
- ✓ փաստաբանի հավակնորդի մուտքի վճար.
- ✓ այլ պետության փաստաբանի հավատարմագրման վճար.
- ✓ փաստաբանի օգնականի մուտքի վճար.
- ✓ փաստաբանի օգնականի ամսական վճար.
- ✓ փաստաբանի լրացուցիչ վերապատրաստման վճար.
- ✓ փաստաբանի տուգանքի գումար.

2018 թվականի հունիսից դեկտեմբեր ամիսների ընթացքում 83 անձի կողմից Իզի Փեյ վճարային տերմինալներով Փաստաբանների պալատի օգտին կատարվել է շուրջ մեկ միլիոն դրամի վճարում:





ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

* * *

Հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացում և բարեփոխումներ.

Ռազմավարության ծրագրով որպես հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացման նվազագույն միջոցառումներ առանձնացվել են հետևյալ գործողությունները.

➤ Հանրային պաշտպանների թվաքանակի ավելացման քաղաքականության վարում.

Հանրային պաշտպանության ոլորտում Փաստաբանների պալատի կողմից մշտապես բարձրացվող խնդիրներից է հանրային պաշտպանի թվաքանակի հարցը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանված անվճար իրավաբանական օգնություն հայցելու իրավունք ունեցող անձանց շրջանակի և հանրային պաշտպանի գրասենյակի կողմից վարվող քրեական և քաղաքացիական (այդ թվում՝ վարչական և սահմանադրական) գործերի վիճակագրության ⁵ ուսումնասիրությունը վկայում է հանրային պաշտպանների քիչ թվաքանակի մասին:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի՝ 2018 թվականին գործող խմբագրությամբ, քաղաքացիական (վարչական) գործերով անվճար իրավաբանական օգնություն պետք է տրամադրվեր ստորև թվարկված 15 սոցիալական խմբերի մեջ մտնող անձանց: Այդպիսիք են՝

- 1) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամները.
- 2) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները.
- 3) դատապարտյալները.
- 4) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի

⁵ ՀՊԳ վիճակագրությունը տես սույն հաշվետվության թիվ 7-9 հավելվածներում:



- անդամները.
- 5) Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցները.
 - 6) գործազուրկները.
 - 7) միայնակ բնակվող կենսաթոշակառուները.
 - 8) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք.
 - 9) փախստականները.
 - 10) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացածները.
 - 11) անվճարունակ այն ֆիզիկական անձինք, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում: Սույն կետի իմաստով անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չունի բավարար եկամուտ, համարել է բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց.
 - 12) հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք.
 - 13) օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձինք.
 - 14) Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողները.
 - 15) խոշտանգումից տուժած անձանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով⁶:
 - 16) «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընտանիքում բռնության


⁶ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով խոշտանգումից տուժած անձանց որպես հանրային պաշտպանության ենթակա խմբի կարգավորումն ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարից 9-ից:



ենթարկված անձանց⁷:

Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող հանրային պաշտպանների հաստիքների քանակը պայմանավորված է համապատասխան տարվա համար պետական բյուջեի մասին օրենքով հատկացվող միջոցների չափով:

«Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով 2018 թվականի համար հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման համար հատկացվող միջոցներով Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակն ունեցել է ՀՊԳ ղեկավարի՝ 1, ՀՊԳ ղեկավարի տեղակալի՝ 1, Երևան քաղաքում և մարզերում հանրային պաշտպանի՝ 54 հաստիքների, ինչպես նաև 18 հաստիք՝ որպես ՀՊԳ օժանդակ աշխատակազմ:



*** ՇԱՆՈՐԹՈՒԹՅՈՒՆ.**

1) Հանրային պաշտպանի համար հատկացված 55 հաստիքից մեկ հաստիք նախատեսվել է ՀՊԳ ղեկավարի տեղակալի համար (հանրային պաշտպանի հաշվարկային դրույքաչափով): Այդ պատճառով

⁷ Այս խումբը որպես հանրային պաշտպանության կատեգորիա ուժի մեջ է մտել 2018 թվականի հունիսի 30-ից:




հանրային պաշտպանների հաստիքների քանակը Փաստաբանների պալատի հաստիքացուցակով, ինչպես նաև ՀՊԳ հաստիքների տեղաբաշխման ակտով սահմանված է 54:

2) ՀՊԳ օժանդակ աշխատակազմի 18 հաստիքներից 10-ի աշխատավարձի դրույքաչափի 50%-ը վճարվում է Փաստաբանների պալատի բյուջեից, իսկ մյուս 50%-ը՝ պետական բյուջեի մասին համապատասխան օրենքով հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման համար հատկացված գումարից, քանի որ այդ հաստիքների գործառույթներն ուղղված են և՛ Փաստաբանների պալատի և՛ հանրային պաշտպանի գրասենյակի սպասարկմանը:

➤ **Հանրային պաշտպանի հաստիքների վարչատարածքային տեղաբաշխումը.**

Փաստաբանների պալատը՝ Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզերում անվճար իրավաբանական օգնության տրամադրման արդյունավետությունն ապահովելու նպատակով հանրային պաշտպանի 54 հաստիքները տեղաբաշխել է **վարչատարածքային սկզբունքով** հաշվի առնելով նաև համապատասխան տարածքում անվճար իրավաբանական օգնության պահանջարկը:

Հանրային պաշտպանների հաստիքների վարչատարածքային սկզբունքով 2018 թվականի տեղաբաշխումը կարելի է տեսնել հետևյալ քարտեզի վրա.



* **ՍԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ.** Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում գործող հաստիքների հանրագումարը կազմում է հանրային պաշտպանի 26 հաստիք:



Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում անվճար իրավաբանական օգնության տրամադրումն ապահովելու նպատակով ՀՊԳ նստավայրերն են գործում ոչ միայն մարզկենտրոններում, այլ նաև մարզերի խոշոր քաղաքներում: Որոշ դեպքերում, կախված համապատասխան մարզում և/կամ մարզի քաղաքում անվճար իրավաբանական օգնության պահանջարկից, նախատեսված է հանրային պաշտպանի ոչ միայն 1 լրիվ, այլ նաև 0,5 և 0,25 դրույքներ:

Մարզում հանրային պաշտպանի մեկ հաստիքի մասնատումը 0,5, իսկ որոշ դեպքերում նաև 0,25 դրույքների՝ հնարավորություն է ընձեռնում առավել արդյունավետ կառավարել հանրային պաշտպանի աշխատաժամանակը, ինչպես նաև ապահովել անվճար իրավաբանական օգնության տրամադրումը ոչ միայն մարզկենտրոնում, այլ նաև տարածական առումով հեռու, սակայն մարզկենտրոնից ոչ պակաս բնակեցված վայրերում:

➤ ՀՊԳ պաշտպան դառնալու ընթացակարգի թափանցիկության բարձրացում և մրցակցության եղանակների կադարելագործում.

2014 թվականից սկսած⁸ հանրային պաշտպանների հաստիքների համալրումն իրականացվում է մրցութային կարգով⁹:

Փաստաբանների պալատի կողմից հաստիքների համալրման մրցութային քաղաքականության որդեգրումը նպատակ է հետապնդում, նախ և առաջ, ապահովել հանրային պաշտպան դառնալու գործընթացի թափանցիկությունը և օբյեկտիվ գնահատել հանրային պաշտպանի թեկնածուի մասնագիտական պատրաստվածությունը:

Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացվող մրցույթն իրականացվում է երկու փուլով՝ գրավոր և բանավոր (հարցազրույց): Մրցույթի կազմակերպման և թեկնածուների աշխատանքների գնահատման համար յուրաքանչյուր տարի ստեղծվում է համապատասխան մրցութային հանձնաժողով, որն անցկացնում է մրցույթի ողջ ընթացքը և գնահատում է քննական առաջադրանքները:

⁸ Հանրային պաշտպանների հաստիքների համալրման մրցութային կարգը ներդրվել է 2013 թվականի հոկտեմբերից, իսկ առաջին մրցույթն անց է կացվել 2014 թվականի հունվարին:

⁹ Հանրային պաշտպանի թափուր հաստիքն արտամրցութային կարգով համալրվում է միայն այն դեպքում, երբ տվյալ հաստիքը մրցութային կարգով անցած թեկնածուներով համալրել հնարավոր չէ, օրինակ՝ երբ ՀՊԳ մարզային գրասենյակում առկա թափուր հաստիքի համալրման համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար որևէ թեկնածու չի դիմել:



Մրցույթի առաջադրանքը ընտրվում է թեկնածուների կողմից վիճակահանության միջոցով, իսկ առաջադրանքների գնահատման համար մշակված է այնպիսի համակարգ, որը հնարավորություն է տալիս գնահատման գործընթացում բացառել սուբյեկտիվ գործոնի ազդեցությունը:

Մրցույթի գրավոր փուլի ընթացքն՝ ըստ կարգի, իրականացվում է աշխատանքի ստուգման գործընթացում թեկնածուի անձի բացահայտումը (աշխատանքի հեղինակի նույնականացումը) բացառող կարգով: Մրցույթի մասնակիցն իր աշխատանքը տպագրում է երկու օրինակից, որոնց վրա փակցնում է այդ պահին պատահականության սկզբունքով արկղից վերցված ծածկագրերը (շտրիխ կոդ): Մրցույթի մասնակիցն իր աշխատանքի տպագրված օրինակներից մեկի վրա ստորագրում է ու անձամբ տեղադրում կնքված արկղի մեջ, իսկ աշխատանքի մյուս օրինակը, որի վրա առկա է միայն ծածկագիր (շտրիխ կոդը)՝ հանձնվում է մրցութային հանձնաժողովին: Գրավոր աշխատանքի ստուգման գործընթացում մրցութային հանձնաժողովի տիրապետության տակ եղած միայն ծածկագրով գրավոր աշխատանքը հնարավորություն չի տալիս նույնականացնելու աշխատանքի հեղինակի անձը:

Ծածկագրերով գնահատականները հրապարակելուց հետո, յուրաքանչյուր թեկնածու իր ծածկագրի և միավորի մասին տեղեկանում է կնքված արկղը բացելուց հետո:

Գրավոր փուլը հաղթահարած հավակնորդները հնարավորություն են ստանում մասնակցելու հարցազրույցի փուլին: Հարցազրույցի փուլում հաղթող ճանաչված հավակնորդներն ընդգրկվում են հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում:

2018 թվականի նոյեմբերին Փաստաբանների պալատը հայտարարել է



մրցույթ հանրային պաշտպանի **18 հաստիքի** համալրման նպատակով:

Հայտարարված մրցույթի գրավոր փուլին մասնակցել են **28 փաստաբան:** Մրցույթի գրավոր փուլը 28 մասնակիցներից հաղթահարել և մրցույթի բանավոր փուլին մասնակցելու իրավունքն են ստացել ընդհանուրը 18 փաստաբան: Նշված բոլոր փաստաբաններն հաղթահարել են նաև մրցույթի բանավոր փուլը և ընդգրկվել են հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում:

➤ Հանրային պաշտպանների մասնագիտացումն ապահովելուն ուղղված միջոցառումների մշակում և իրականացում.


2014 թվականից սկսած Երևան քաղաքի և մարզերի հանրային պաշտպանների թափուր տեղերը համալրելու համար հանրային պաշտպանների մրցույթն անց է կացվում և հանրային պաշտպանները նշանակվում են աշխատանքի ըստ **քրեական** և **քաղաքացիական (վարչական)** մասնագիտացման:

2018 թվականին Երևան քաղաքում գործել է հանրային պաշտպանի 28 հաստիք (հանրային պաշտպանների ընդհանուր հաստիքների 52%-ը), որից 22 հաստիքը քրեական մասնագիտացմամբ (79%), իսկ 6-ը՝ քաղաքացիական (վարչական) մասնագիտացմամբ (21%):

ՀՊԳ հաստիքների տեղաբաշխման հարաբերակցությունն ըստ վարչապարաժքային բաժանման (Երևան քաղաք և մարզեր)



Երևան քաղաքում ՀՊԳ հաստիքների տեղաբաշխման հարաբերակցությունն ըստ մասնագիտացման



Հնարավորության դեպքում հանրային պաշտպանների մասնագիտացումն ապահովվում է նաև մարզերում: Այն մարզերում, որտեղ առկա են հանրային պաշտպանի մեկից ավելի հաստիքներ, հանրային պաշտպանների



գործունեությունը նույնպես իրականացվում է ըստ քրեական և քաղաքացիական (վարչական) մասնագիտացման: Իսկ այն մարզերում, որտեղ գործում է հանրային պաշտպանի մեկ հաստիք, ապա այդ հաստիքը զբաղեցնող հանրային պաշտպանն ընտրվում է այնպես, որպեսզի հնարավոր լինի անհրաժեշտության դեպքում մարզի բնակչությանն ապահովվել իրավական օգնության տրամադրումը և՛ քրեական և՛ քաղաքացիական (վարչական) գործերով:

➤ **Հանրային պաշտպանների խրախուսման եղանակների և ռոտացիոն համակարգի ներդրում՝ հաստիքների որոշակի փոկոսը սկսնակ փաստաբաններով համալրելու նպատակով.**

2015 թվականից Փաստաբանների պալատում գործում է հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության և արդյունավետության գնահատման համակարգ, որն ապահովվում է «**Հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության և աշխատանքի արդյունավետության գնահատման**» հրահանգով սահմանված չափորոշիչներով:

Նշված հրահանգը սահմանում է հանրային պաշտպանի գրասենյակում առանց մրցույթի անցկացման հանրային պաշտպանի հետ կնքված աշխատանքային պայմանագրի մեկամյա ժամկետը ևս մեկ տարով երկարաձգելու համար հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության և աշխատանքի արդյունավետության գնահատման չափորոշիչները և գնահատման ընթացակարգը:

Նշված հրահանգի համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում գործող հանրային պաշտպաններից յուրաքանչյուրի աշխատանքն՝ ըստ հրահանգով սահմանված միավորների, գնահատման հանձնաժողովի կողմից գնահատվում է **ընդհանուր չափորոշիչներով**, որոնց շրջանակներում հաշվի են առնվում հանրային պաշտպանի կողմից օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին մասնակցած լինելը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի կամ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտման համար կարգապահական տույժի ենթարկված չլինելը, աշխատանքային կարգապահության խախտման համար տույժի ենթարկված չլինելը, հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգով փաստաբանական վարույթին վերաբերվող պահանջները կատարած լինելը:

Հրահանգով հանրային պաշտպանի աշխատանքը գնահատվում է նաև **ըստ հանրային պաշտպանի մասնագիտական ուղղվածության (քրեական ու քաղաքացիական և վարչական) չափորոշիչների:**

Հրահանգի համաձայն՝ **քրեական ուղղվածության** հանրային պաշտպանների աշխատանքը գնահատվում է հաշվի առնելով հանրային



պաշտպանի արդարացումների (լրիվ կամ մասնակի), ինչպես նաև արդարացնող և ոչ արդարացնող հիմքով վարույթը կարճված գործերի թիվը, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու կամ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերը, ավելի մեղմ հողվածով կամ հողվածի մասով վերաորակումները, տուգանքի նշանակումները, սանկցիայով նախատեսված նվազ խիստ պատժի նշանակումները, անչափահասի նկատմամբ դատտարակչական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակումները, վերջնական դատական ակտի դեմ բերված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, ինչպես նաև մեղադրանքի կողմի բերած՝ մերժված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, վերջնական դատական ակտի դեմ լրիվ կամ մասնակի բավարարված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, որպես կալանավորման այլընտրանքային միջոց դատարանի կողմից գրավ ընտրելը, որպես խափանման միջոց ընտրված կալանքը մեկ այլ խափանման միջոցով փոխարինվելը և այլ չափորոշիչներ:

Քաղաքացիական և վարչական ուղղվածության հանրային պաշտպանների գործունեությունը գնահատվում է հաշվի առնելով հանրային պաշտպանի վարչական մարմին կամ դրա վերադաս մարմնին ուղղված դիմումների, բողոքների, կատարված հարցումների թիվը, վարչական մարմնի կամ դրա վերադասի կողմից բավարարված վարչական բողոքների թիվը, կազմված հայցադիմումների, դիմումների թիվը, հօգուտ վստահորդի կայացված վերջնական դատական ակտերը, միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, վերջնական դատական ակտի դեմ բերված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, վերջնական դատական ակտի դեմ լրիվ կամ մասնակի բավարարված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը և այլ չափորոշիչներ:

2018 թվականին գործող հանրային պաշտպանի **54 հաստիքով** աշխատող **71 հանրային** պաշտպաններից **13-ը** (գործող հանրային պաշտպանների մոտ **18%-ը**) համալրվել են երիտասարդ¹⁰ փաստաբաններով:

➤ **Հանրային պաշտպանների կողմից կատարված ծախսերի փոխհատուցման համակարգի շարունակական կիրառում.**

Դեռևս 2016 թվականին ներդրվել էր հանրային պաշտպանների կողմից կատարված ծախսերի փոխհատուցման համակարգ, որը շարունակաբար կիրառվել է նաև 2018 թվականի ընթացքում:

¹⁰ Մինչև երեք տարվա փաստաբանական ստաժ ունեցող փաստաբաններ:



Սահմանված կարգավորումների համաձայն՝ հանրային պաշտպանի կողմից կատարված ծախսը ենթակա է փոխհատուցման, եթե՝

- 1) այդ ծախսի կատարումը անհրաժեշտ է հանրային պաշտպանություն իրականացնելու համար, և
- 2) այդ ծախսի կատարումը տվյալ պահին հնարավոր չէր նախապես կազմակերպել պալատի միջոցով, և
- 3) առկա է այդ ծախսի կատարումը հիմնավորող փաստաթուղթ, և
- 4) այդ ծախսի կատարումը չի գերազանցում 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամը, իսկ մարզային գրասենյակների դեպքում՝ կոմունալ ծառայությունների գծով այդ ծախսի գումարը չի գերազանցում 70.000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամը, և
- 5) այդ ծախսի փոխհատուցման հայտը ներկայացվել է կարգով նախատեսված ժամկետում, և
- 6) այդ ծախսի կատարումը բխում է կարգի պահանջներից:

➤ Անվճար իրավական օգնության տրամադրման ծառայության որակի բարձրացում և ընթացակարգերի նկատմամբ վերահսկողության կառուցակարգերի մշակում և ներդրում.

Հանրային պաշտպանի գրասենյակում իրավական օգնության տրամադրման ծառայության որակի բարձրացման նկատմամբ վերահսկողությունն ապահովվում է Փաստաբանների պալատում գործող մոնիտորինգի բաժնի միջոցով, որը ներառում է երկու մոնիթորինգի պատասխանատուների հաստիք:

Մոնիտորինգի բաժնի ստեղծումը պայմանավորված է եղել հանրային պաշտպանների կողմից փաստաբանական վարույթները հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգով սահմանված չափանիշներով վարելու նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, ինչպես նաև հանրային պաշտպանների կողմից տրամադրվող իրավաբանական օգնության որակի գնահատման նպատակով:

➤ Օտարերկրյա և/կամ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ վերապատրաստման դասընթացների անցկացում:

Հանրային պաշտպանի գրասենյակում Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ-ի դեսպանության և ԱՄՆ-ի Վիսկոնսին նահանգի փաստաբանների ասոցիացիայի աշխատանքային խմբի հետ համատեղ 2018 թվականի մարտ ամսին կազմակերպվել է վերապատրաստում:



ABA CEELI կողմից կազմակերպվել է հասարակական կազմակերպությունների հետ հանդիպում հանրային պաշտպանների մասնակցությամբ:

2018թ. երրորդ եռամսյակում հանրային պաշտպանների համար ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպվել է ապաստան հայցողների իրավունքների թեմայով վերապատրաստման դասընթաց:

* * *

☐ ՀՊԳ հեղինակության բարձրացում.

➤ **ՀՊԳ գործունեության լայն լուսաբանում, այդ թվում՝ հանրային պաշտպանների վարած գործերի և արձանագրված արդյունքների (արդարացումներ և այլ հաջողություններ) վիճակագրության հրապարակում.**

2018 թվականին Փաստաբանների պալատը շարունակել է իրականացնել զանգվածային լրատվության տարբեր միջոցներով հանրային պաշտպանների գործունեության լուսաբանմանն ուղղված միջոցառումները: Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության և հանրային պաշտպանների առանձին գործերի լուսաբանումն իրականացվել է հեռուստահաղորդումների, ռադիոհաղորդումների և համացանցի իրավական կայքերի միջոցով:

Փաստաբանների պալատի կայքէջում նախատեսվել է նաև հանրային պաշտպանների արդարացման դատական ակտերի հրապարակման բաժին, որտեղ մշտապես հրապարակվում են հանրային պաշտպանների վարույթում առկա գործերով արդարացման դատական ակտերը:

* * *

☐ Անվճար իրավական օգնության տրամադրման այլընտրանքային համակարգերի ներդրում, pro bono մշակույթի զարգացում.

➤ **Անվճար խորհրդատվության օր Փաստաբանների պալատում.**

Հաշվի առնելով հատկապես քաղաքացիական գործերով բնակչության անվճար իրավական օգնության պահանջարկը, Փաստաբանների պալատը Փաստաբանական դպրոցի իրավաբանական կլինիկայի հետ համատեղ իրականացնում է նաև քաղաքացիներին անվճար իրավական խորհրդատվության տրամադրման նախաձեռնություն, որը շարունակվել է նաև 2018 թվականին:

Ավելի քան հինգ տարի է, ինչ Փաստաբանների պալատում յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը հայտարարվել է անվճար խորհրդատվության տրամադրման օր:



2018 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի և Փաստաբանական դպրոցի ջանքերով Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության որոշ մարզերում անվճար իրավաբանական խորհրդատվություն է տրամադրել **1931 քաղաքացու** (2018թ. համեմատ՝ ավել 16%-ով):

➤ **Անվճար խորհրդատվության դրամաշնորհային ծրագիր.**

2018 թվականի հուլիս-օգոստոս և նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում Փաստաբանների պալատը Շվեյցարիայի «Հայաստան» Հիմնադրամի (ԺՆԱ) աջակցությամբ իրականացրել է «Անվճար իրավաբանական խորհրդատվություն» դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում փաստաբան փորձագետները Հայաստանի Հանրապետության Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերում անվճար իրավաբանական խորհրդատվություն են տրամադրել քաղաքացիներին: Ընդ որում՝ յուրաքանչյուր մարզի համար ծրագրին մասնակից փորձագետներն ընտրվել են տվյալ մարզի (մարզի համապատասխան քաղաքի) տարածքում գործունեություն իրականացնող փաստաբաններից:

Ծրագրի շրջանակներում 2018 թվականի ընթացքում (հուլիս, օգոստոս, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներ) Հայաստանի Հանրապետության 4 մարզերի (Լոռի, Շիրակ, Գեղարքունիք և Տավուշ) ընդհանուրը 14 քաղաքներում 28 փաստաբան անվճար խորհրդատվություն է տրամադրվել ընդհանուրը 292 անձի:

Ծրագիրը շարունակվել է նաև 2019 թվականին՝ Սյունիքի և Կոտայքի մարզերում:

➤ **Անվճար խորհրդատվության դրամաշնորհային ծրագիր.**

Փաստաբանների պալատն իրականացնում է երիտասարդ փաստաբաններին օժանդակության նախաձեռնություն, որը նպաստում է ոչ միայն սկսնակ փաստաբանների՝ համայնքում ինտեգրմանը, մասնագիտության մեջ կայացմանը, փորձ և վստահորդներ ձեռք բերելուն, այլ նաև pro bono մշակույթի զարգացմանը:

Փաստաբանների պալատում 2017 թվականի հունիսի 7-ին բացվել է 20 երիտասարդ փաստաբանի համար նախատեսված աշխատասենյակ, որը հագեցած է համակարգիչներով, այլ անհրաժեշտ տեխնիկայով և նախատեսված է Փաստաբանական դպրոցը նոր ավարտած և աշխատասենյակն օգտագործելու իրավունք ստացած փաստաբանների համար, որոնք առանձին փաստաբանական գրասենյակ չունենալու պարագայում աշխատասենյակից իրենց անձնական գործերն են վարում, ինչպես նաև իրենց գործերին զուգահեռ որոշակի քանակի գործեր (այդ թվում՝ ՀՊԳ շահառուների գործեր) վարում են անվճար:

Նախաձեռնությունը կրում է շարունակական բնույթ և իրականացվել է նաև 2018 թվականի ընթացքում:



* * *

ՀՊԳ աշխատանքների իրականացման թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում

➤ **ՀՊԳ-ի կողմից եռամսյա և տարեկան հաշվետվությունների տրամադրում և կայքէջում դրանց տեղադրում.**

Փաստաբանների պալատի կայքէջում ստեղծված «ՀՊԳ հաշվետվություններ» էջում շարունակվում են եռամսյակային, կիսամյակային և տարեկան կտրվածքով հրապարակվել ՀՊԳ կողմից վարած քրեական, ինչպես նաև քաղաքացիական, վարչական կամ սահմանադրական գործերի վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունները: Տարեկան վիճակագրական տվյալների ամփոփումից հետո ՀՊԳ եռամսյակային և կիսամյակային հաշվետվությունները փոխարինվում են տարեկան հաշվետվությամբ: ՀՊԳ 2018 թվականի վիճակագրական տվյալներն ամփոփ ներկայացված են սույն հաշվետվության հավելվածներում:

2018 թվականին արձանագրվել է քաղաքացիների դիմումների հիման վրա անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելու 6688 գործ, իսկ քրեական վարույթն իրականացնող մարմինների պահանջների հիման վրա՝ 7021 գործ:

2018 թվականին անվճար իրավաբանական օգնություն է ցուցաբերվել 1045 դատապարտյալի, նախորդ տարվա 585-ի փոխարեն, այսինքն՝ 79%-ով ավել:





ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ. ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



➤ **Փաստաբանական դպրոցում ուսուցումն իրականացվում է ըստ մասնագիտական ուղղվածության.**

2014 թվականի աշնանային հոսքի ընդունելությունից սկսած Փաստաբանական դպրոցում ուսուցումը կազմակերպվում է ըստ **քրեաիրավական** և **քաղաքացիաիրավական մասնագիտական ուղղվածությունների**, ինչի արդյունքում համապատասխան մասնագիտացում ընտրած ունկնդիրները ուսումնական պլանով նախատեսված առարկաներից մոտ 90% հարաբերակցությամբ անցնում են նեղ մասնագիտական առարկաներ, օրինակ՝ քրեական ուղղվածության ունկնդիրները քրեաիրավական մասնագիտացման առարկաներ, իսկ մնացած առարկաները հարակից են և կրում են ընդհանուր բնույթ՝ անկախ ունկնդրի մասնագիտացումից, օրինակ՝ փաստաբանի վարքագծի, հոգեբանության հիմունքների, սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների հետ կապված առարկաները:

Հաշվետու ժամանակահատվածում Փաստաբանական դպրոցն իրականացրել է երկու ընդունելություն՝ 2018 թվականի գարնանային հոսքի և 2018 թվականի աշնանային հոսքի համար:

2018 թվականի գարնանային հոսքի ընդունելության արդյունքներով Դպրոց է ընդունվել և դասընթացներին ներգրավվել թվով 77 ունկնդիր, որից՝

ա. քրեաիրավական ուղղվածությամբ՝ 23 (22 առկա, 1 հեռավար),

բ. քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածությամբ՝ 48 (44 առկա, 4 հեռավար),

գ. հատուկ դիմորդի առկա ուսուցման ծրագրով՝ 6 ունկնդիր:

2018 թվականի աշնանային հոսքի ընդունելության արդյունքներով Դպրոց է ընդունվել և դասընթացներին ներգրավվել թվով 94 ունկնդիր, որից՝

ա. քրեաիրավական ուղղվածությամբ՝ 23 (20 առկա, 3 հեռավար),

բ. քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածությամբ՝ 46 (43 առկա, 3 հեռավար),

գ. հատուկ դիմորդի առկա ուսուցման ծրագրով՝ 25 ունկնդիր:



* * *

➤ **Փաստաբանական դպրոցի ունկնդիրների որակավորման քննությունները.**

Փաստաբանական դպրոցի ունկնդիրների (շրջանավարտների) որակավորման քննություններն անցկացնում է Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը:

Գործող կարգի համաձայն՝ Փաստաբանական դպրոցի ունկնդիրն ավարտելով ուսուցումը դպրոցում, որակավորման քննությանը մասնակցելու նպատակով Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան որակավորման հանձնաժողովին է ներկայացնում սահմանված ձևի լրացրած և ստորագրած դիմումը:



Որակավորման քննությունն անցկացվում է համակարգչի միջոցով՝ գրավոր ընթացակարգով: Ունկնդիրը որակավորման քննությունը հանձնում է այն ուղղվածությամբ (քրեական կամ քաղաքացիական), որով անցել է ուսուցումը Փաստաբանական դպրոցում:

Քրեական ուղղվածություն ընտրած ունկնդիրն առաջադրանք է կատարում՝

- 1) **քրեական մոդուլից**՝ առաջին ատյանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելով,
- 2) **քրեական մոդուլից**՝ միջանկյալ դատական կամ այլ ակտի դեմ բողոք կազմելով,
- 3) **դեոնթոլոգիայի մոդուլից**՝ փաստաբանի վարքագծի կանոնների



վերաբերյալ խնդիրներ լուծելով:

Քաղաքացիական ուղղվածություն ընտրած ունկնդիրն առաջադրանք է կատարում՝

- 1) **քաղաքացիական մոդուլից՝** առաջին ատյանի դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելով,
- 2) **քաղաքացիական մոդուլից՝** քաղաքացիական գործով հայցադիմում կազմելով,
- 3) **դեռնթուլոգիայի մոդուլից՝** փաստաբանի վարքագծի կանոնների վերաբերյալ խնդիրներ լուծելով:

Ունկնդրի կողմից որակավորման քննության յուրաքանչյուր մոդուլ հանձնում է առանձին օր, իսկ մոդուլների հանձնման օրերի միջև ընդմիջումը պետք է լինի նվազագույնը 5 (հինգ) օր:

Յուրաքանչյուր մոդուլի հանձնման համար ունկնդիրը գնահատվում է առավելագույնը 20 (քսան) միավոր, իսկ որակավորման քննությունը հանձնած է համարվում և փաստաբանի արտոնագիր ստանալու իրավունք է ձեռք բերում այն ունկնդիրը, ով յուրաքանչյուր մոդուլի համար ստացել է առնվազն 12 (տասներկու) միավոր:

Որակավորման քննությունները իրականացվում է աշխատանքի ստուգման գործընթացում **աշխատանքի հեղինակի նույնականացումը բացառող կարգով:**

Համապատասխան մոդուլից առաջադրանքն ավարտելուց հետո ունկնդիրն իր աշխատանքը տպագրում է երկու օրինակից, որոնց վրա փակցնում է այդ պահին պատահականության սկզբունքով արկղից վերցված ծածկագրերը (շտրիխ կոդ): Ունկնդիրն իր աշխատանքի տպագրված օրինակներից մեկի վրա ստորագրում է ու անձամբ տեղադրում այն կնքված արկղի մեջ, իսկ աշխատանքի մյուս օրինակը, որի վրա առկա է միայն ծածկագիր (շտրիխ կոդը) հանձնվում է որակավորման հանձնաժողովին:

2018 թվականի գարնանը կազմակերպված որակավորման քննությանը մասնակցել է 86 հավակնորդ, որից 13-ը հատուկ դիմորդ: Որակավորման քննությունը չի հանձնել 20 հավակնորդ:

2018 թվականի աշնանը կազմակերպված որակավորման քննությանը մասնակցել է 83 հավակնորդ, որից 7-ը հատուկ դիմորդ: Որակավորման քննությունը չի հանձնել 29 հավակնորդ:

Որակավորման քննությունը չհանձնած հավակնորդները վերահանձնել են որակավորման քննությունները:



➤ **ՓԱՍՏԱԲԱՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ.**

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ առաջին անգամ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալիս, փաստաբանը Փաստաբանների պալատի խորհրդի առջև հանդիսավոր պայմաններում երդում է տալիս: Արդեն ձևավորված ավանդույթի համաձայն Փաստաբանական դպրոցի շրջանավարտներն արտոնագրեր են ստանում հանդիսավոր պայմաններում՝ Փաստաբանների պալատի տարբերանշանով պատմուճաններով և գլխարկներով:





➤ **ՓԱՍՏԱՔԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ.**

Փաստաբանական դպրոցը շարունակում է իրավաբանական կլինիկայի գործունեությունը Երևանում և տրամադրում է իրավաբանական օգնություն յուրաքանչյուր աշխատանքային հինգշաբթի օր:

Իրավաբանական անվճար ծառայությունների մատուցումը իրականացվում է կլինիկայի ներքին ռեսուրսներով՝ Փաստաբանական դպրոցի ունկնդիրների միջոցով՝ վերջիններիս պրակտիկայի շրջանակներում, Փաստաբանական դպրոցի՝ փաստաբան հանդիսացող աշխատողների մենթորության ներքո:

2018 թվականի ընթացքում իրավաբանական կլինիկայում **իրավաբանական օգնություն է տրամադրվել 1393 այցելուի**: Բացի խորհրդատվական ծառայություններից, կազմվել է 65 հայցադիմում և հակընդդեմ հայցադիմում, 26 դիմում, 4 բողոք, 4 գրավոր կարծիք, 3 միջնորդություն, 6 գրություն-հարցում, 1 տեղեկանք, 1 փոխառության պայմանագիր, 1 արձանագրության վիճարկում:

2018 թվականին Փաստաբանական դպրոցի իրավաբանական կլինիկան ներգրավվել է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության (ABA ROLI) կողմից կազմակերպված **«Իրազեկ և պաշտպանված ընտրող» նախաձեռնությանը**, որի շրջանակներում տեղի են ունեցել հանրային իրազեկման հանդիպումներ և տրամադրվել է անվճար իրավաբանական օգնություն ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում՝ կապված ընտրական իրավունքի հետ:

Իրավաբանական կլինիկայի արագ արձագանքման խմբերը 2018 թվականի դեկտեմբերի 9-ին՝ ՀՀ ազգային ժողովի արտահերթ ընտրության օրը, իրականացրել են ինչպես դիտորդական առաքելություն, այնպես էլ տրամադրել անվճար իրավաբանական օգնություն:

2018 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին «Իրազեկ և պաշտպանված ընտրող» նախաձեռնության շրջանակներում Փաստաբանական դպրոցում գործել է «Թեժ գիծ»:

«Իրազեկ և պաշտպանված ընտրող» նախաձեռնության շրջանակներում Երևանի գրասենյակը կազմակերպել է 5 հանրային իրազեկման հանդիպումներ մասնավորապես՝

- ✓ 26.11.2018թ. Արմավիր քաղաքում,
- ✓ 28.11.2018թ. Եղեգնաձոր քաղաքում,
- ✓ 30.11.2018թ. Երևան քաղաքում,
- ✓ 04.12.2018թ. Արարատի մարզի Այնթափ համայնքում,
- ✓ 04.12.2018թ. Արմավիրի մարզի Դաշտ համայնքում:

Նշված իրազեկման հանդիպումներին մասնակցել են ընդհանուր թվով 102



քաղաքացիներ, որոնցից իրավաբանական խորհրդատվություն է տրվել 37 անձի:

Նշված նախաձեռնության շրջանակներում բաժանվել են ընդհանուր թվով 460 թուղթիկներ, ինչպես նաև թվով 50 պաստառներ՝ Երևանի, Արմավիրի, Էջմիածնի, Վեդիի, Եղեգնաձորի, Այնթափի, Դաշտ և հարակից համայնքների վարչական տարածքներում:

Շահառուներին հանրային իրազեկման հանդիպումների, ինչպես նաև քաղաքացիների ընդունելության ժամանակ, ինչպես նաև գործընկեր կազմակերպությունների միջոցով տրամադրվել է նաև ընտրողների համար նախատեսված ուղեցույցներ՝ ընդհանուր 660 օրինակ,

Նախաձեռնության շրջանակներում մշակվել և փաստաբաններին է տրամադրվել նաև փաստաբանների համար նախատեսված թվով 290 ուղեցույցներ:

Նույն ժամանակահատվածում 80 (ութսուն) անձի իրավաբանական խորհրդատվություն է տրվել նաև թե՛ գծի օգնությամբ:

ՀՀ ազգային ժողովի ընտրությունների օրը Երևանում եղել է թվով 479 տեղամաս, որից 255 տեղամաս (շուրջ 53%) այցելել են նախաձեռնության շրջանակներում գործող արագ արձագանքման խմբերը և կատարել իրենց դիտարկումները: Այցերի ընթացքում նկատվել են թերացումներ կապված 1. տեսախցիկների տեսադաշտը լիարժեք օրենքի պահանջներին համապատասխանելու, տեղամասերում թեքահարթակների բացակայության, ինչպես նաև կահավորանքի և կազմակերպչական առանձնահատկություններով պայմանավորված այլ թերացումներ:

➤ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ.

Փաստաբանական դպրոցի և Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի հետ փոխհամագործակցության հուշագիր է ստորագրվել, որի շրջանակներում Փաստաբանական դպրոցի իրավաբանական կլինիկայում շարունակական կազմակերպվում են համալսարանի ուսանողների պրակտիկան:

ԱՄՆ պետական դեպարտամենտի թմրադեղերի դեմ միջազգային պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից տրամադրած¹¹ դրամաշնորհի¹² շրջանակում Միացյալ Թագավորության Նոթիինգեմի Թրենթի համալսարանի իրավագիտության դպրոցը (Երևանի պետական համալսարանի

¹¹ Տրամադրվել է Միացյալ Թագավորության Նոթիինգեմի Թրենթի համալսարանին:
¹² Corruption and Human Rights Curriculum Development in Armenia



իրավագիտության ֆակուլտետի հետ) 2018 թվականի սեպտեմբեր-2019 հուլիս ժամանակահատվածում պլանավորել է իրականացնել՝

- ✓ 4 քննարկում՝ ծրագրի շրջանակում ներառված 7 թեմաների վերաբերյալ առկա խնդիրների մասով,
- ✓ 1 վերապատրաստողների վերապատրաստում,
- ✓ 7 տարբեր թեմաներով վերապատրաստում (2 տարբեր խմբերի համար),
- ✓ 7 տարբեր թեմաներով ուսումնական նյութերի մշակում, ընդ որում՝ 2 թեման նաև մշակվելու է որպես հեռավար հարթակի նյութ,
- ✓ ծրագրի արդյունավետ շարունակականությանն առնչվող փաստաթղթի մշակում:





ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

■ Մարզային համակարգողների ընտրություններ.

Ռազմավարական ծրագրով նախատեսված առանձին ուղղություններից է Փաստաբանների պալատի մարզային քաղաքականության իրականացումը: Այդ գործընթացում կարևոր գործոն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության մարզերում մարզային համակարգողների և մարզի քաղաքների պատասխանատուների ինստիտուտի զարգացումը:

2018 թվականին Փաստաբանների պալատը կազմակերպել են Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու մարզերի մարզային համակարգողների ընտրություններ:

Մարզային ընտրությունների արդյունքում համապատասխան մարզերում Փաստաբանների պալատի մարզային համակարգողներ ընտրվել հետևյալ փաստաբանները.

| № | ՀՀ մարզը և մարզի քաղաքը | Փաստաբանի անունը և ազգանունը |
|----|--|------------------------------|
| 1. | Արմավիրի մարզի մարզային համակարգող | Յուլակ Մարգարյան |
| 2. | Գեղարքունիքի մարզի մարզային համակարգող | Լևոն Թորոսյան |
| 3. | Լոռու մարզի մարզային համակարգող | Ադելինա Հակոբյան |

■ Մարզերի փաստաբանների հեղինակություններ.

Արմավիրի մարզում ՀՀ փաստաբանների պալատի մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ 2018 թվականի սեպտեմբերի 15-ին հրավիրվել է Արմավիրի մարզի փաստաբանների ժողով: Ժողովից հետո տեղի է ունեցել հանդիպում մարզի փաստաբանների և ՀՀ փաստաբանների պալատի նախագահի, ՀՊԳ ղեկավարի, ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի հետ: Հանդիպմանը քննարկվել են մարզի փաստաբանների խնդիրները և դրանց լուծման ուղիները:

Գեղարքունիքի մարզում ՀՀ փաստաբանների պալատի մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ 2018 թվականի սեպտեմբերի 29-ին, հրավիրվել է Գեղարքունիքի մարզի փաստաբանների ժողով: Ժողովից



հետո տեղի է ունեցել քննարկում (վերապատրաստման դասընթաց), որի ընթացքում բարձրացվել են մարզի փաստաբանների խնդիրները և դրանց լուծման ուղիները: Քննարկմանը մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահը, նախագահի տեղակալը, ՀՊԳ ղեկավարը, ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը:

Լոռու մարզում ՀՀ փաստաբանների պալատի մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ 2018 թվականի հոկտեմբերի 13-ին հրավիրվել է Լոռու մարզի փաստաբանների ժողով: Ժողովից հետո տեղի է ունեցել քննարկում (վերապատրաստման դասընթաց), որի ընթացքում բարձրացվել են մարզի փաստաբանների խնդիրները և դրանց լուծման ուղիները: Քննարկմանը մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահը, նախագահի տեղակալը, ՀՊԳ ղեկավարը, ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը:

Տավուշի մարզում ՀՀ փաստաբանների պալատի մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ 2018 թվականի հոկտեմբերի 13-ին հրավիրվել է Տավուշի մարզի փաստաբանների ժողով, որը տեղի չի ունեցել, քանի որ մարզային համակարգողի որևէ թեկնածու ինքնաառաջադրման (առաջադրման) դիմում չի ներկայացրել:

■ Մարզերում գործունեություն իրականացնող փաստաբանների վերապատրաստում.

Կարևորելով մարզերում գործունեություն իրականացնող փաստաբանների վերապատրաստման հարցը, Փաստաբանների պալատը մարզային փաստաբանների համար կազմակերպում է վերապատրաստման հեռավար դասընթացներ, ինչպես նաև վերապատրաստման դասընթացներ է կազմակերպում տեղում՝ դասընթացավար գործուղելու միջոցով:

2018 թվականի ընթացքում փաստաբանների համար տեղում վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվել Հայաստանի բոլոր մարզերում:

■ Փաստաբանների պալատի մարզային համակարգողների գրասենյակներին և մարզերում գործող փաստաբաններին գրականության տրամադրում.

Շարունակելով մարզերում գործունեություն ծավալող փաստաբաններին նաև մարզային համակարգողների միջոցով մասնագիտական իրավաբանական գրականություն տրամադրելու իր քաղաքականությունը՝ Փաստաբանների



պալատը 2018 թվականի ընթացքում մարզային համակարգողների միջոցով մարզերում գործունեություն իրականացնող փաստաբաններին տրամադրել է 150 թվաքանակով գրականություն (չհաշված անհատական կարգով բոլոր փաստաբաններին տրամադրվող գրականությունը), որն իր մեջ ներառում է ինչպես տեսական աղբյուրներ, այնպես էլ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների ձեռնարկներ և այլ ուսումնասօժանդակ նյութեր:

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ
ՓՈՒՆԸՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ ԵՆ ՍՏՈՐԱԳՐԵԼ**

Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը և ՀՀ Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը 2018 թվականի հոկտեմբերի 17-ին ստորագրել են փոխըմբռնման հուշագիր, որի շրջանակներում կողմերը պատրաստվում են համագործակցել մարզի բնակիչների համար իրազեկման ծրագրերի իրականացման, անվճար և արդյունավետ իրավաբանական օգնության տրամադրման ուղղություններով:





Ըստ հուշագրի Կոտայքի մարզպետարանը վարչական շենքում անվճար տրամադրելու է տարածք Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի Հրազդան քաղաքի նստավայրը տեղակայելու համար: Կողմերի համաձայնությամբ տարածքից օգտվելու իրավունք ունեն նաև մարզի տարածքում գործունեություն իրականացնող այն փաստաբանները, ովքեր չունեն փաստաբանական գործունեություն իրականացնելու տարածք:

Իր հերթին Փաստաբանների պալատը պատրաստակամություն է հայտնել տարածքում ապահովել հանրային պաշտպանների և փաստաբանների բնականոն գործունեության համար անհրաժեշտ գույքով և տեխնիկայով:

Փոխըմբռնման հուշագրով նախատեսվում է նաև մարզի ավագ դպրոցներում սեմինարներ կազմակերպել աշակերտներին Մարդու իրավունքների մասին իրազեկելու և փաստաբանի մասնագիտության հիմունքներին ծանոթացնելու նպատակով: Հանրային պաշտպանների, ինչպես նաև տարածքը զբաղեցնող փաստաբանների միջոցով յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ օր մարզի բնակիչների համար կազմակերպվելու է անվճար իրավաբանական խորհրդատվություն:

Կողմերը պայմանավորվել են անվճար իրավաբանական խորհրդատվության և տարածքների տրամադրման հարցերը քննարկել նաև մարզի մյուս քաղաքների (Աբովյան և Եղվարդ) համար:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԵՎ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ ՓՈԽԸՄԲՐՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ ԵՆ ՍՏՈՐԱԳՐԵԼ

Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը և Շիրակի մարզպետ Կարեն Սարուխանյանը 2018 թվականի նոյեմբերի 19-ին ստորագրել են փոխըմբռնման հուշագիր:

Ստորագրված փաստաթղթի շրջանակներում նախատեսվում է անվճար իրավաբանական օգնություն տրամադրել մարզի բնակիչներին, իսկ մարզպետարանն էլ անվճար տրամադրելու է տարածք մարզում փաստաբանական գործունեության իրականացնող փաստաբանների համար:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաև սոցիալական այն խնդիրները, որոնք պահանջում են իրավական լուծումներ: Դրանցից են բնակարաններ ստանալու, բանկերի նկատմամբ ֆինանսական պարտավորություններ ունենալու և այլ խնդիրները:

Շիրակի մարզում փաստաբանական գործունեություն են ծավալում 50 փաստաբաններ, որոնցից 5-ը հանրային պաշտպաններ են:





ՓԱՍՏԱՔԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ



➤ Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի գործունեության ակտիվացում.

➤ Փաստաբանների իրավունքների իրականացման խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում, տարածում և քննարկումների կազմակերպում. Հանձնաժողովի աշխատանքների հանրայնացում.

Հայաստանի Հանրապետությունում փաստաբանության՝ որպես արդարադատության համակարգի ինստիտուտի զարգացման և մասնագիտության նկատմամբ հարգանքի ձևավորման համար կարևորագույն նախադրյալ է հանդիսանում Փաստաբանների պալատի անդամ փաստաբանների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող այլ պետության փաստաբանների իրավունքների պաշտպանությունն ապահովելը, ինչպես նաև այդ իրավունքների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ միջավայր ստեղծելը: Այդ նպատակով դեռևս 2014 թվականին Փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ ստեղծվել էր **փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողով**, որի նպատակն է միջոցներ ձեռնարկել փաստաբանների իրավունքներն ու մասնագիտական գործունեությունը բոլոր տեսակի (հատկապես՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների) սպառնալիքներից, խոչընդոտներից կամ ցանկացած տեսակի այլ հակաիրավական միջամտությունից (ոտնձգությունից) պաշտպանելու համար:

Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովից բացի՝ Փաստաբանների պալատում գործում է նաև արագ արձագանքման հանձնախումբ, որն արձանագրում է փաստաբանի մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանի լիազորությունների իրականացման խոչընդոտման դեպքերը կամ փաստաբանի նկատմամբ այլ անօրինական գործողությունները, ինչպես նաև նպաստում է փաստաբանների մասնագիտական



գործունեության ընթացքում փաստաբանների լիազորությունների իրականացման խոչընդոտները վերացնելուն:

2018 թվականի ընթացքում արձանագրվել են փաստաբանների իրավունքների խախտման հետևյալ դեպքերը.

| № | Ամսաթիվ | Ահազանգ կատարող փաստաբանը | Ահազանգի համառոտ բովանդակությունը | Ահազանգի կապակցությամբ կատարած Հետազոտական ընթացքի վերաբերյալ տեղեկություններ |
|---|------------|---------------------------|--|---|
| 1 | 12.02.2018 | Սամվել Ջաղինյան | Փաստաբանը ներկայացել է ԱԱԾ, իր պաշտպանյալների իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համար, սակայն փաստաբանին չեն թողել ներս մտնել | Արագ արձագանքման խմբի անդամ, փաստաբան Արտակ Խաչատրյանը ներկայացել է համապատասխան վայր և արձանագրել իրավիճակը, որի մասին տեղեկացվել է Փաստաբանների պալատի փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը: |
| 2 | 17.03.2018 | Վրեժ Խաչիկյան | Փաստաբանը ներկայացել է Ոստիկանության Էրեբունի բաժին՝ բերման ենթարկված Ալբերտ Խոջոյանին իրավաբանական օգնություն տրամադրելու համար, սակայն շուրջ 20 րոպե իրեն չեն թողել մոտենալ պաշտպանյալին: Միաժամանակ փաստաբանին հայտնել են, որ կթողնեն, երբ անձին տեղափոխեն քննիչի մոտ | Կապ է հաստատվել ոստիկանության հետ կնքված հուշագրի շրջանակում ոստիկանության ներկայացուցչի հետ: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում ժամը 17:00-ին փաստաբանին թույլատրվել է այցելել բերման ենթարկված անձին: |
| 3 | 17.04.2018 | Էդգար Հակոբյան | Փաստաբանը հայտնել է, որ գտնվում է Մասիվի բաժանմունքում, սակայն ոստիկանները չեն թողնում այցելելու բերման ենթարկված իր վստահորդին | Կապ է հաստատվել ոստիկանության հետ կնքված հուշագրի շրջանակում ոստիկանության ներկայացուցչի հետ: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ վստահորդի մոտ գտնվում է այլ փաստաբան, իսկ քննչական գործողությունն ավարտվել է: |



**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԽՈՒՄԲԸ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ Է ՑՈՒՑԱԲԵՐԵԼ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ**

✓ 2018 թվականի ապրիլյան իրադարձություններ.

Փաստաբանների պալատի կողմից ձևավորված առաջին իրավաբանական անվճար օգնություն տրամադրող փաստաբանների խումբն իրավական օժանդակություն է ցուցաբերել 2018 թվականի ապրիլյան իրադարձությունների ժամանակ բերման ենթարկված քաղաքացիներին:

Փաստաբանների պալատի թեժ գիծը ստացել է բազմաթիվ հեռախոսազանգեր ոստիկանության և քննչական այլ մարմիններում գտնվողների ծնողներից և այլ հարազատներից, հասարակական կազմակերպություններից, ավագանու անդամներից, պատգամավորներից:

Նշված նախաձեռնության շրջանակներում ավելի քան 200 քաղաքացու իրավական օգնություն են ցույց տվել շուրջ երեք տասնյակ փաստաբաններ: Նշված նախաձեռնության շրջանակներում առավել ակտիվ և ջանասիրաբար հանդես են եկել փաստաբաններ Ամայա Մելքոնյանը, Անուշ Հարությունյանը, Անի Հալույանը, Սամվել Զաղինյանը, Հերմինե Միքայելյանը, Սիրուշ Աղվանյանը, Հայկ Պետրոսյանը, Մուրադ Ասրյանը, Կարինե Լալաբեկյանը, Լուսինե Վիրաբյանը և Գեորգի Մելիքյանը, որոնք 2018 թվականի դեկտեմբերին Փաստաբանների պալատի նախագահի կողմից պարգևատրվել են շնորհակալագրերով:




**Ամայա
Մելքոնյան**

**Անուշ
Հարությունյան**

Անի Հալույան

**Սամվել
Զաղինյան**

**Հերմինե
Միքայելյան**



**Սիրուշ
Աղվանյան**

Մուրադ Ասրյան

**Կարինե
Լալաբեկյան**

**Լուսինե
Վիրաբյան**

**Գեորգի
Մելիքյան**



✓ **«Արտահերթ խորհրդարանական ընտրություններ».**

2018 թվականի դեկտեմբերի 9-ին, Հայաստանի Հանրապետությունում արտահերթ խորհրդարանական ընտրության կապակցությամբ քաղաքացիներին իրավական օգնության տրամադրելու համար ՀՀ փաստաբանների պալատում գործել է արագ արձագանքման խումբ:

Դեռևս դեկտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատն այդ մասին հաղորդագրությամբ հանդես էր եկել: Տեղեկությունը լայնորեն տարածվել էր թե՛ էլեկտրոնային լրատվամիջոցներում և թե՛ քվեարկության օրը հեռուստաընկերություններից մի քանիսի եթերներում:

Այս օրերի ընթացքում արագ արձագանքման խմբին դիմել է թվով 23 քաղաքացի: Քաղաքացիները դիմել են հիմնականում հաշվառման վայրից տարբերվող հասցեում, ստացիոնար բուժման հաստատությունում ընտրություն կատարելու հնարավորության, ինչպես նաև ընտրական կարգի վերաբերյալ հարցերով:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԽՍՏՈՐԵՆ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆ ԱՎԱԳ ԼԱԼԱՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԽՈՂԸՆԴՈՏԵԼՈՒ ԴԵՊԸ

Փաստաբան Ավագ Լալայանը 2018 թվականի ապրիլի 20-ին մի խումբ ոստիկանների կողմից Երևանի Սիլիկյան և Շիրազ փողոցների խաչմերուկում բռնության է ենթարկվել, երբ փորձել է նույն վայրում ոստիկանների կողմից բերման ենթարկվող անչափահասներին իրավաբանական օգնություն տրամադրել:

ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից դատաբժշկական փորձաքննություն է նշանակվել պարզելու համար, թե Ավագ Լալայանի մարմնի վրա ինչպիսի՞ վնասվածքներ կան:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը խստորեն դատապարտում է փաստաբան Ավագ Լալայանի նկատմամբ բռնություն կիրառելու և նրա մասնագիտական գործունեության խոչընդոտելու դեպքը և հիշեցնում է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանը, նրա ընտանիքի անդամները և նրանց գույքը գտնվում են պետության պաշտպանության ներքո: Պետական իրավասու մարմինները պարտավոր են ձեռնարկել փաստաբանի պաշտպանության համար անհրաժեշտ՝ օրենքով սահմանված միջոցներ, եթե իր մասնագիտական



պարտականությունների կատարման հետ կապված՝ նրան կամ նրա ընտանիքի անդամներին սպառնացել են ֆիզիկական բռնությամբ, գույքի ոչնչացմամբ կամ այլ անօրինական գործողություններով:

Փաստաբանների պալատը պատկան մարմիններից ակնկալում է նշված միջադեպի կապակցությամբ բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննություն, և հետևողական է լինելու իր մասնագիտական գործունեությունն իրականացնող փաստաբանի նկատմամբ բռնություն կիրառողներին պատասխանատվության ենթարկելու հարցում:



**2018 թվականի ընթացքում փաստաբանների դեմ
հարուցված քրեական գործերը ¹³.**

| № | Փաստաբանի անունը, ազգանունը | Արդյունագրի № | «Քրեական օրենսգրքի հոդված» | Տեղեկություններ գործի ընթացքի մասին |
|----------|------------------------------------|----------------------|--|--|
| 1. | Սարգիս Ասլանյան | 801 | 205-րդ հոդվածի 1-ին մաս 2-րդ կետ (Հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելը) | գործը գտնվում է նախաքննության փուլում |
| 2. | Մհեր Բադալյան | 1005 | 178-րդ հոդված 2-րդ մաս 1-ին և 2-րդ կետ (Խարդախություն) | գործի վարույթը կարճվել է |



¹³ Սույն հաշվետվությունում արտացոլվել են միայն այն քրեական գործերը, որոնց մասին Փաստաբանների պալատը տեղեկացվել է:



2018 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի մասնակցությամբ քննվող քաղաքացիական գործերի մասին համառոտ տեղեկություններ.

2018 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի մասնակցությամբ քննվել է **60 դատական գործ**, որից՝

| 29 գործ | 4 գործ | 6 գործ | 8 գործ | 7 գործ | 6 գործ |
|---|---|--|---|--|--|
| Պալատի խորհրդի որոշումներով կարգապահական պատասխանատվության ենթարկված փաստաբանների կողմից Պալատի խորհրդի որոշումների վիճարկում | Պալատի խորհրդի այլ (կարգապահական պատասխանատվության հետ չկապված) որոշումների վիճարկում | Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին Պալատի նախագահի որոշումների վիճարկում | Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մերժելու մասին Պալատի նախագահի որոշումների վիճարկում | այլ հարցեր, օրինակ՝ Պալատի կողմից տեղեկատվություն չտրամադրելը, որակավորման քննությունները չհանձնած հավակնորդի կողմից իր մասով որակավորման քննության արդյունքները վիճարկելը | (այդ թվում վճարման կարգադրություն) հայցվոր (դիմող) է հանդիսացել Պալատը: Փաստաբանի կողմից չվճարված տուգանքի գումարի բռնագանձման պահանջով գործեր |



**2018 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի
մասնակցությամբ քննվող քրեական գործերի մասին
համառոտ տեղեկություններ.**

2017 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննվել է (շարունակվել է քննվել) թիվ 13816616 քրեական գործը, որով կազմված և դատարանին հանձնված մեղադրական եզրակացության համաձայն Պալատի նախկին գլխավոր հաշվապահ Կարինե Սարգսյանին առաջադրվել է մեղադրանք՝ յուրացման եղանակով Պալատից 134.821.915 ՀՀ դրամ հափշտակություն կատարելու համար: Նշված քրեական գործը 2018 թվականի հունվարի 17-ից մինչ օրս գտնվում է դատական քննության փուլում (թիվ ԵԿԴ/0006/01/18 քրեական գործ):

Մեղադրական եզրակացության համաձայն՝ քրեական գործով նախաքննությամբ ձեռք բերված ապացույցների համակցությամբ հիմնավորվել է, որ Պալատի նախկին գլխավոր հաշվապահ Կարինե Սարգսյանը, 2005 թվականի նոյեմբերի 1-ից աշխատելով Պալատում որպես գլխավոր հաշվապահ, հափշտակություն կատարելու միասնական դիտավորությամբ, 2012թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. մարտի 27-ն ընկած ժամանակաընթացքում, յուրացման եղանակով հափշտակել է Պալատին պատկանող առանձնապես խոշոր չափերի 134.821.915 ՀՀ դրամ գումար, այսինքն՝ կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարք:

Նշված քրեական գործով Փաստաբանների պալատը ճանաչվել է տուժող: Քրեական գործով Փաստաբանների պալատը ներկայացրել է քաղաքացիական հայց՝ 109.321.301 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջով:





ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՅՈՒՄ

➤ **Փաստաբանների վերապատրաստման համակարգի շարունակական զարգացում.**

Փաստաբանների պալատում շարունակաբար կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ: Փաստաբանների պալատում գործում է փաստաբանների վերապատրաստման երեք հարթակ՝ վերապատրաստման դասընթացներ տեղում՝ Փաստաբանների պալատում կամ Փաստաբանական դպրոցում, հեռավար և առցանց (online) վերապատրաստում:

| | | |
|--|---|---|
|  <p>ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՏԵՂՈՒՄ</p> |  <p>ՀԵՌԱՎԱՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ</p> |  <p>ԱՌՑԱՆՑ (ONLINE) ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ</p> |
|--|---|---|

Յուրաքանչյուր ամսվա վերջում Փաստաբանների պալատի կայքէջում հրապարակվում և փաստաբաններին էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվում է հաջորդ ամսվա համար փաստաբանների վերապատրաստման դասընթացների ժամանակացույցը:

Յուրաքանչյուր ամսվա ընթացքում Փաստաբանների պալատում կազմակերպվում է միջինը 15-ից 20 վերապատրաստման դասընթաց:

2018 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, տեղի է ունեցել



վերապատրաստման 221 անվճար դասընթաց՝ ներառյալ հեռավար և առցանց վերապատրաստման դասընթացները, ինչպես նաև ակումբի նիստերը և Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրված հաստատությունների կողմից անցկացվող դասընթացները:

* * *

➤ **Վերախմբագրվել է Փաստաբանների վերապատրաստման կարգը.**



Փաստաբանների պալատի խորհրդի 22.02.2018թ. թիվ 4/11-Լ որոշմամբ ընդունվել է Փաստաբանների վերապատրաստման նոր կարգ, որով փաստաբանների վերապատրաստման գործընթացում տեղի են ունեցել մի շարք բարեփոխումներ: Մասնավորապես՝

✓ վերապատրաստման առկա, հեռավար և առցանց ձևերի վերաբերյալ տարբեր իրավական ակտերով նախատեսված կարգավորումները կողիֆիկացվել են մեկ իրավական ակտում.

✓ նախատեսվել է հաշվետու կիսամյակի համար անցած վերապատրաստման նվազագույն ժամաքանակից ավել անցած ժամաքանակը հաջորդ կիսամյակ տեղափոխելու հնարավորություն: Մասնավորապես՝

ա. առաջին կիսամյակի (հունվար-հունիս) ընթացքում Նվազագույն ժամաքանակը գերազանցող ժամերը կարող են տեղափոխվել միայն հաջորդ կիսամյակ (հուլիս-դեկտեմբեր).

բ. օրացուցային տարվա ընթացքում Դեռնթուրգիայի թեմայով դասընթացներին 4 (չորս) ժամը գերազանցող մասնակցության ժամերը կարող են տեղափոխվել հաջորդ օրացուցային տարի՝ միայն Դեռնթուրգիայի թեմայով դասընթացների հաշվարկի նպատակով:

✓ նվազագույն ժամաքանակով վերապատրաստման դասընթաց չանցնելու հիմքով փաստաբանի նկատմամբ առաջին անգամ հարուցված կարգապահական վարույթի կարճման համար փաստաբանն հնարավորություն է տրվել անվճար անցնել հետաձգված վերապատրաստման դասընթացները:

Վերապատրաստման նախկին կարգի համաձայն վերապատրաստում չանցնելու հիմքով կարգապահական պատասխանատվության չենթարկված փաստաբանի նկատմամբ հաշվետու կիսամյակի համար նվազագույն



Ժամաքանակով վերապատրաստման դասընթաց չանցնելու հիմքով առաջին անգամ կարգապահական վարույթ չէր հարուցվում, եթե նա գրավոր դիմում (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով) էր ներկայացնում ՀՀ փաստաբանների պալատի նախագահին՝ պարտավորվելով հաշվետու կիսամյակում չանցած վերապատրաստման դասընթացների ժամերն իր հաշվին անցնել հաջորդ կիսամյակում:

Նոր կարգով նույն իրավիճակում փաստաբանը կարող է անվճար անցնել հետաձգված վերապատրաստման դասընթացները:

✓ լրամշակվել են վերապատրաստում չանցնելու դեպքում կարգապահական պատասխանատվության չենթարկելու դեպքերը: Մասնավորապես կարգի 41-րդ կետի համաձայն՝ ՀՀ փաստաբանների պալատը չի ենթարկում կարգապահական պատասխանատվության հաշվետու կիսամյակում վերապատրաստմանը չմասնակցած՝

ա. փաստաբանական գործունեություն չիրականացնող 63 (վաթսուներեք) տարին լրացած փաստաբաններին.

բ. փաստաբանական գործունեություն չիրականացնող առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամություն ունեցող փաստաբաններին.

գ. հղիության երեսուն շաբաթից սկսած մինչև ծննդաբերությունը՝ համապատասխան բժշկական փաստաթուղթ ներկայացնելու դեպքում՝ կին փաստաբաններին.

դ. ծննդաբերությունից հետո երեք տարի ժամանակով (մինչև երեխայի երեք տարեկան դառնալը)՝ երեխայի ծննդյան վկայականը ներկայացնելու դեպքում՝ կին փաստաբաններին.

ե. առնվազն երեք անչափահաս երեխա ունեցող (մինչև երեխաներից մեկի չափահաս դառնալը)՝ երեխաների ծննդյան վկայականը ներկայացնելու դեպքում՝ կին փաստաբաններին.

զ. այլ պետությունում ուսուցում անցնող փաստաբաններին, եթե նրանք նախապես գրավոր (կամ էլեկտրոնային փոստով) տեղեկացրել են ՀՀ փաստաբանների պալատին.

է. Փաստաբանական դպրոցի շրջանավարտ փաստաբաններին՝ Փաստաբանական դպրոցն ավարտելու կիսամյակին հաջորդող երկու կիսամյակների ընթացքում:



✓ սահմանվել են դասընթացների վարման ընդհանուր կանոններ:

✓ լրամշակվել են վերապատրաստման ժամերի հաշվարկման և վերապատրաստման դասընթացի հավասարեցման հետ կապված կարգավորումները:

Վերապատրաստման նոր կարգով կատարվել են նաև այլ բարեփոխումներ:

* * *

➤ **Վերապատրաստման գործընթացում փաստաբանների կարիքների բացահայտում և վերապատրաստման արդյունավետության գնահատում.**

Փաստաբանների վերապատրաստման շարունակական զարգացման գործընթացի կարևորագույն նախապայմաններից է փաստաբանների կարիքների գնահատումը:

Վերապատրաստման դասընթացների արդյունավետության գնահատման նպատակով յուրաքանչյուր դասընթացին մասնակից փաստաբաններին տրվում են գնահատման հարցաթերթիկներ, որոնք անանուն կարգով և կամավորության սկզբունքով լրացվում են փաստաբանների կողմից:




**ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝
2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՄԱՐ**

✓ **2018 թվականի առաջին կիսամյակում (հունվարից հունիս)** տեղի է ունեցել **վերապատրաստման 101 անվճար դասընթաց**, որոնց ընթացքում, ընդհանուր առմամբ, վերապատրաստվել են **1142 փաստաբան**:

Հաշվետու ժամանակահատվածում կամավորության սկզբունքով լրացվել է շուրջ **100 հարցաթերթիկ**:


2018 թվականի առաջին կիսամյակի (հունվարից հունիս) ընթացքում լրացված գնահատման հարցաթերթիկում առկա չափանիշներից յուրաքանչյուրի մասով հետազոտության արդյունքները հանգում են հետևյալին.



Հարցվող փաստաբանների 96%-ը հարցաթերթիկում գնահատելով **դասընթացի արդյունավետությունը և գործնական կիրառելիությունը**, դրական պատասխան է տվել (71%՝ գերազանց և 25%՝ լավ): Բավարար գնահատական է տվել հարցվածների միայն 4%-ը:

Նշված ցուցանիշը վկայում է այն մասին, որ մասնակից փաստաբանները հիմնականում գոհ են կազմակերպվող վերապատրաստման դասընթացներից:

Դասախոսի կողմից դասընթացի նյութը տիրապետելու հարցի հետ կապված հարցվող փաստաբանների 98%-ը դրական պատասխան է տվել (76%՝ գերազանց և 22%՝ լավ): Բավարար գնահատական է տվել հարցվածների միայն 2%-ը:





Դասընթացի վարման մեթոդների հետ կապված հարցվածների 73%-ը դասընթացի մեթոդները գնահատել է գերազանց, 25%-ը՝ լավ, իսկ 2%-ը՝ բավարար:




**ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝
2018 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՄԱՐ**

✓ 2018 թվականի երկրորդ կիսամյակում (հուլիսից դեկտեմբեր) տեղի է ունեցել վերապատրաստման 120 անվճար դասընթաց, որոնց ընթացքում, ընդհանուր առմամբ, վերապատրաստվել են 1278 փաստաբաններ:

Հաշվետու ժամանակահատվածում կամավորության սկզբունքով լրացվել է շուրջ 160 հարցաթերթիկ:


2018 թվականի երկրորդ կիսամյակի (հուլիսից դեկտեմբեր) ընթացքում լրացված գնահատման հարցաթերթիկում առկա չափանիշներից յուրաքանչյուրի մասով հետազոտության արդյունքները ամփոփված են ստորև ներկայացվող գծապատկերների միջոցով.



Հարցվող փաստաբանների **98%-ը** հարցաթերթիկում գնահատելով **դասընթացի արդյունավետությունը և գործնական կիրառելիությունը**, դրական պատասխան է տվել (69%՝ գերազանց և 29%՝ լավ): Բավարար գնահատական է տվել հարցվածների միայն 2%-ը:

Նշված ցուցանիշը վկայում է այն մասին, որ մասնակից փաստաբանները հիմնականում գոհ են կազմակերպվող վերապատրաստման դասընթացներից:

Դասախոսի կողմից դասընթացի նյութը տիրապետելու հարցի հետ կապված հարցվող փաստաբանների **99%-ը** դրական պատասխան է տվել (78%՝ գերազանց և 21%՝ լավ): Բավարար գնահատական է տվել հարցվածների միայն 1%-ը:





Դասընթացի վարման մեթոդների հետ կապված հարցվածների 72%-ը դասընթացի մեթոդները գնահատել է գերազանց, 26%-ը՝ լավ, իսկ 2%-ը՝ բավարար:



* * *



➤ **Փաստաբանների վերապատրաստում առցանց (online) կոնֆերանսների միջոցով.**

Փաստաբանների պալատը գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ փաստաբանների համար կազմակերպում է նաև առցանց (online) կոնֆերանսներ:

16.05.2018թ. տեղի է ունեցել առցանց (online) կոնֆերանս՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու հմտությունների վերաբերյալ: Կոնֆերանսը Ստրասբուրգից վարել է Եվրոպայի խորհրդի փորձագետը:



* * *

➤ **Փաստաբանների վերապատրաստման ծրագրերի պարբերական արդիականացում՝ հաշվի առնելով նաև փաստաբանների պահանջմունքները.**

Վերոնշյալ կետում ներկայացված գնահատման թերթիկներում նախատեսված է նաև հատուկ հատված, որտեղ վերապատրաստման դասընթացների մասնակիցները կարող են առաջարկել նաև իրենց նախընտրած թեմաները: Փաստաբանները հնարավորություն ունեն իրենց նախընտրած վերապատրաստման թեմաների առաջարկներ ներկայացնել նաև էլեկտրոնային փոստի միջոցով:

«Փաստաբանների վերապատրաստման կարգին» համապատասխան՝ Փաստաբանների պալատի նախագահի կողմից վերապատրաստման դասընթացների թեմաները սահմանվում են կիսամյակային կարգով՝ հաշվի առնելով նաև գնահատման թերթիկներում, ինչպես նաև էլեկտրոնային փոստով փաստաբանների առաջարկած թեմաները:

Յուրաքանչյուր կիսամյակի համար Փաստաբանների պալատի նախագահի համապատասխան որոշումներով հաստատվում են շուրջ 200 վերապատրաստման թեմաներ, որոնք առանձնացված են ըստ իրավունքի տարբեր ճյուղերի՝ քրեական, քաղաքացիական, վարչական և միջազգային իրավունք, ինչպես նաև գիտագործնական և այլ ուղղվածություններին (օրինակ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք (դեոնթոլոգիա), Փաստաբանական գրասենյակի կառավարման առանձնահատկությունները, արդյունավետ բանակցություններ, սթրեսի և կոնֆլիկտների կառավարում և այլն):

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փաստաբանների վերապատրաստման համար հաստատված թեմաների գերակշիռ մեծամասնությունը ընտրված են հենց փաստաբանների կողմից ներկայացված առաջարկներից:





ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ՕՐԵՆԱԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2018 թվականի ընթացքում Փաստաբանների պալատը իրավական ակտ մշակող մարմիններից ստացել և համապատասխան դիրքորոշում է հայտնել ավելի քան 10 իրավական ակտերի վերաբերյալ, որոնցից են՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

2) «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

3) «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք փոփոխություն կատարելու անհրաժեշտության մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

4) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

5) «Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

2018 թվականի օգոստոսին Փաստաբանների աշխատակազմի կողմից մշակվել և Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավանության արժանանալուց հետո ՀՀ արդարադատության նախարարություն են ներկայացվել ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի նախագծեր՝ իրենց հիմնավորումներով.

➤ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին.

➤ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին.

➤ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերին.

➤ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին.

➤ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին:





ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԴԵՊՔԵՐԸ

Փաստաբանների պալատի խորհուրդը՝ 2018 թվականի ապրիլյան դեպքերի հետ կապված քննարկելով բերման ենթարկված խաղաղ հավաքի մասնակիցներին իրավական օգնություն ցույց տվող փաստաբանների հայտարարությունը՝ 2018 թվականի ապրիլի 23-ին իրավախախտման դեպքերը դատապարտող որոշում է կայացրել:

Որոշման մեջ նշվել է, որ արձանագրվել են մասնավոր դեպքեր, երբ բերման ենթարկված խաղաղ հավաքի մասնակիցներին իրավաբանական օգնություն ցույց տալու համար վարույթ իրականացնող համապատասխան մարմիններ ներկայացած փաստաբաններին հետաքննության և նախաքննության մարմինների որոշ պաշտոնատար անձինք ո՛չ միայն թույլ չեն տվել հանդիպել իրենց վստահորդներին և իրավաբանական օգնություն ցույց տալ նրանց, այլ նաև հորդորել են քաղաքացիներին չօգտվել փաստաբանի միջոցով իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից: Փաստաբանի աշխատանքի խոչընդոտման դեպքերն արձանագրվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից:

Որոշմամբ անդրադարձ է կատարվել նաև ՀՀ Ազգային ժողովի ձեռքակալված պատգամավոր Նիկոլ Փաշինյանի գտնվելու վայրի մասին անհայտ լինելու վերաբերյալ «Կոնցեռն Դիալոգ» փաստաբանական գրասենյակի հայտարարությանն առ այն, որ 2018 թվականի ապրիլի 22-ին ժամը 11:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Արցախի փողոցից ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից բերման է ենթարկվել ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Նիկոլ Փաշինյանը: Հայտարարությամբ Փաստաբանական գրասենյակը տեղեկացրել էր, որ Նիկոլ Փաշինյանի ընտանիքի անդամներից կամ գործընկերներից որևէ մեկը հստակ տեղեկատվություն չունի Նիկոլ Փաշինյանի գտնվելու վայրի մասին: Ավելին, գրասենյակի փաստաբանը գիշերը մեկնել է Սևան քաղաք, մինչդեռ այնտեղ նույնպես չի հայտնաբերվել Նիկոլ Փաշինյանը:

Փաստաբանների պալատի խորհուրդն անթույլատրելի է համարել հետաքննության և նախաքննության մարմինների պաշտոնատար անձանց նման վարքագիծը և գտել է, որ այն կոպտորեն խախտում է մարդկանց՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և օրենքներով երաշխավորված մի շարք հիմնարար իրավունքներ:

Փաստաբանների պալատի խորհուրդը միաձայն որոշել է՝

- Խստորեն դատապարտել նման իրավախախտման դեպքերը և կոչ անել



իրավասու մարմիններին՝

1) ապահովել բերման ենթարկված հավաքի մասնակիցների՝ փաստաբանների միջոցով իրավաբանական օգնություն ստանալու անօտարելի իրավունքի պատշաճ իրացումը,

2) ազատությունից զրկված անձանց, այդ թվում՝ ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանին ապահովել՝ այդ մասին անհապաղ իր ընտրած անձին տեղեկացնելու և իրավաբանական օգնություն ստանալու անօտարելի իրավունքների իրացումը:





ՓԱՍՏԱՔԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՓԱՍՏԱՔԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԹԻՐԱԽԱՎՈՐՄԱՆ ԽՆԴՐԻՆ

2018 թվականի ընթացքում արձանագրվեց իրավիճակ, երբ զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական ցանցերի հարթակներում հաճախակի դարձան այն դեպքերը, երբ մասնագիտական աշխատանք կատարող փաստաբանը նույնացվել է իր վստահորդի հետ: Փաստաբանների նկատմամբ վերաբերմունքը հիմնականում պայմանավորված է եղել նրանց վստահորդների անձով ու այդ անձանց վերաբերյալ հանրության բացասական ընկալումներով:

Բազմաթիվ են եղել փաստաբանների պատիվն ու արժանապատվությունը նսեմացնելու նպատակ հետապնդող, նույնիսկ սպառնալիք պարունակող մեկնաբանությունները:

Փաստաբանների պալատի նախագահը նախկինում, մի շարք անգամներ, այդ թվում՝ 2018 թվականի հունիսին, անդրադարձել է որոշ քրեական գործերի առնչությամբ փաստաբանության ինստիտուտի թիրախավորման խնդրին՝ կոչ անելով հարգել փաստաբանի մասնագիտական աշխատանքը և չնույնացնել փաստաբանին իր վստահորդի հետ:

Նշված խնդրին անդրադարձել էր նաև Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանն՝ ընդգծելով հասարակությունում փաստաբանի աշխատանքի վերաբերյալ իրավական ճիշտ մշակույթի ու ընկալումների արմատավորման կարևորությունը:

Չնայած այս կոչերին և հորդորներին, շարունակվեն են հնչեցվել փաստաբանների պատիվն ու արժանապատվությունը նսեմացնող արտահայտություններ: Այս միտումը Փաստաբանների պալատը գնահատել է վտանգավոր, քանի որ նման իրավիճակը խոչընդոտ է հանդիսանում փաստաբանության ամրապնդման գործընթացում:

Փաստաբանի նկատմամբ վիրավորանքի հրապարակային դրսևորումներն ունեն աճի միտում, ինչը պայմանավորված է նշված դեպքերի կանխարգելման և իրավական հետապնդման արդյունավետ միջոցների բացակայությամբ: Գործող օրենսդրությամբ քրեորեն արգելված արարք է հանդիսանում միայն փաստաբանին սպառնալը, մինչդեռ փաստաբանին հրապարակային հարթակներում վիրավորելը (հայհոյելը) իր վտանգավորությամբ չի զիջում նախորդ արարքին, քանի որ նույն կերպ խախտում է որևէ անձի կողմից փաստաբանական գործունեությանը չմիջամտելու երաշխիքը («Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդված):



Միայն քաղաքացիաիրավական պատասխանատվությունը արդյունավետ միջոց չի հանդիսանում փաստաբանի արժանապատվությունը, մասնագիտական անկախությունը և անկաշկանդ գործելու ազատությունը պաշտպանելու համար: Այս տեսանկյունից, փաստաբանին վիրավորելու վարքագծի քրեաիրավական կանխարգելումն ու հետապնդումը կարող է հանդիսանալ առավել արդյունավետ գործիք:

Նկատի ունենալով վերոգրյալը, մասնավորապես՝ փաստաբանի նկատմամբ վիրավորանքի հրապարակային դրսևորումների աճը, Փաստաբանների պալատը նախաձեռնել է փաստաբանին՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ վիրավորելու արարքի քրեականացման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՀ արդարադատության նախարարությանն առաջարկություն ներկայացնելու հարցը:



**ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԻՐԱՎՈՐԱԿԱՆ
ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

- «Պետք է բացառել փաստաբանների դեմ ուղղված արելության ալիքն ու խոսքը». Արտակ Զեյնալյան

2018 թվականի օգոստոսի 6-ին ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը սոցիալական ցանցի իր էջում փաստաբաններին թիրախավորելու դեպքերի վերաբերյալ Փաստաբանների պալատի նախագահի արված հայտարարության հետ կապված հրապարակել է դիրքորոշում իրավաբանական օգնության էության և փաստաբանի կարգավիճակի մասին:

Արտակ Զեյնալյանն անթույլատրելի է համարել պաշտպանի նույնացումը վստահորդին՝ նշելով, որ Հայաստանի Հանրապետությունում գործում է անձնական պատասխանատվության սկզբունքը, այսինքն՝ որևէ այլ անձ չպետք է կրի մեղսագրվող արարքից բխող բացասական հետևանքները, ուստի՝ պետք է բացառել փաստաբանների դեմ ուղղված ատելության ալիքն ու խոսքը, ինչը պայմանավորված է, ընդամենն, օրենքով հանրության անունից իրենց վրա դրված պարտականությունները կատարելով:





ՓԱՍՏԱԲԱՆԻՆ ՎԻՐԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԶՐՊԱՐՏԵԼՈՒ ԱՐԱՐՔՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽԱՁԵՆՆՈՒԹՅՈՒՆ



2018 թվականի օգոստոսին Փաստաբանների պալատը աշխատակազմը մշակել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը ներկայացվել է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանը:

Փաստաբանների պալատի խորհրդի 11.08.2018թ. որոշմամբ հավանություն է տրվել «Հայաստանի Հանրապետության քրեական

օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին և որոշվել է Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմնին ներկայացնել համապատասխան առաջարկություն:

Նախագծով առաջարկվել է 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՀ քրեական օրենսգրքի 332.3-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ. **«3. Փաստաբանին՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ վիրավորելը՝ պատժվում է պուզանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:»:**

Ըստ նախագծի հիմնավորման դրա ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջին շրջանում հաճախ են դարձել փաստաբաններին՝ իրենց մասնագիտական գործունեության ընթացքում վիրավորելու և զրպարտելու դեպքերը, իսկ միայն քաղաքացիաիրավական պատասխանատվությունն արդյունավետ միջոց չի հանդիսանում փաստաբանի արժանապատվությունը և գործարար համբավը պաշտպանելու համար: Այս տեսանկյունից, քրեական պատասխանատվություն նախատեսելը պրևենտիվ (կանխիչ) նշանակություն կունենա:

Ինչ վերաբերում է փաստաբանին զրպարտելու արարքը քրեականացնելու առաջարկին, ապա, նախ և առաջ, կարևոր է արձանագրել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածը՝ գործող խմբագրությամբ, որպես արդարադատության դեմ ուղղված հանցագործություն, արդեն իսկ քրեորեն հետապնդելի արարք է որակում դատախազին, քննիչին, հետաքննություն



կատարող անձին կամ դատական ակտերի հարկադիր կատարողին զրպարտելը: Հետևաբար՝ նշված անձանց ցանկում փաստաբանին, որպես արդարադատության իրականացմանը նպաստող կարևոր դերակատարի, չներառելը Փաստաբանների պալատը որակել է որպես լուրջ բացթողում, որն անհրաժեշտ է լրացնել:

Հատկանշական է, որ նույն օրենսգրքով քրեական պատասխանատվություն է նախատեսվում նաև Մարդու իրավունքների պաշտպանին, կապված նրա լիազորությունների իրականացման հետ, վիրավորելու համար (հոդված՝ 332.2):

Ըստ Փաստաբանների պալատի՝ փաստաբանին՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ վիրավորելը և զրպարտելն ունի հանրային վտանգավորության բարձր աստիճան, քանի որ այն իր բացասական ազդեցությունն է ունենում ոչ միայն փաստաբանի անձի, այլ նաև վերջինիս կողմից իրականացվող մասնագիտական գործունեության արդյունքի վրա և հանդիսանում է վերջինիս վրա ճնշում գործադրելու և, հետևաբար, նրա մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու միջոց:

Նշված առաջարկի համար հիմք է հանդիսացել նաև եվրոպական և ԱՊՀ մի շարք երկրների (Օրինակ՝ Ֆրանսիա, Գերմանիա, Վրաստան, Ռուսաստանի Դաշնություն), ինչպես նաև ԱՄՆ փորձը:





ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՃՆՇՈՒՄՆԵՐԸ



2018 թվականի ընթացքում հասարակության մի հատվածի մոտ նկատելի էր լարվածություն օբյեկտիվորեն զգայուն որոշ քրեական գործերի առնչությամբ, ինչի կապակցությամբ թիրախավորվել էր նաև փաստաբանության ինստիտուտը, որը կոչված է ապահովելու իրավաբանական օգնության տրամադրումը յուրաքանչյուրին՝ անկախ մեղսագրվող արարքի բնույթից և հանրային վտանգավորության աստիճանից:

Արձանագրվել են նաև փաստաբաններին և դատավորներին վիրավորելու (հայիոյելու) վարքագծի դրսևորման դեպքեր, իսկ գործադիր իշխանությունը համարժեք միջամտություն չի ցուցաբերում:

2018 թվականի դեկտեմբերի 25-ին Փաստաբանների պալատի խորհուրդը՝ քննարկելով դատավորների և փաստաբանների նկատմամբ հասարակության մի հատվածի կողմից դրսևորվող անհանդուրժող վարքագիծն, իր անհանգստությունն է հայտնել ոչ միայն փաստաբանների, այլ նաև դատավորների նկատմամբ կիրառվող ճնշումների կապակցությամբ:

Փաստաբանների պալատի խորհուրդն անթույլատրելի է համարել փաստաբանների և դատավորների նկատմամբ իրականացվող ճնշումները, անկախ դրանց դրսևորման ձևից և ժամանակից և գտել է, որ ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի հրապարակային խոսքը նույնպես կարող է նպաստել այս բացասական վարքագիծը կանխելուն:

Հարցի քննարկման արդյունքում Փաստաբանների պալատի խորհուրդը միաձայն որոշել է՝

1. Խստորեն դատապարտել փաստաբանների և դատավորների նկատմամբ իրականացվող ճնշումները, անկախ դրանց դրսևորման ձևից և ժամանակից:

2. Զորակցություն հայտնել դատավորներին՝ հորդորելով չչեղվել իրենց



սահմանադրական առաքելությունից:

3. Դիմել ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանին՝ առաջարկելով հանդես գալ կոչով և օգտագործել իր հեղինակությունը հասարակության մոտ իրավագիտակցության բարձրացման գործուն քայլեր կենսագործելու ուղղությամբ:





ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՅՆՈՒՄ

■ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԸՆԹԱՑ.

Դեռևս 2017 թվականի նոյեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի, Ռուսաստանի Դաշնության փաստաբանների պալատի և Եվրոպայի խորհրդի HELP¹⁴ ծրագրի հետ համագործակցության շրջանակներում Փաստաբանների պալատում մեկնարկել էր «Ընդհանրական իրավունքը և մարդու իրավունքները: Երեխաների և մեծահասակների իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշները» թեմայով փաստաբանների համար նախատեսված հեռավար դասընթացի ծրագիրը:



Դասընթացի նպատակն էր ընտանեկան իրավունքի վերաբերյալ ներպետական և միջազգային պրակտիկայի համատեղ քննարկումը, դերաբաշխման միջոցով Հայաստանի և Ռուսաստանի փաստաբաններին

¹⁴ Իրավունքի ոլորտի մասնագետների ուսուցում մարդու իրավունքների վերաբերյալ:



մինևույն խնդրահարույց դատական պրակտիկային անմիջական մասնակից դարձնելը և ուսումնական հարթակում երեխայի լավագույն շահի պաշտպանության համար ստեղծված մարզող դատախազին (moot court) մասնակցելը:

Այս նախաձեռնության շրջանակներում վերապատրաստման հեռավար դասընթացը զուգահեռաբար ընթացել է նաև Ռուսաստանի Դաշնությունում և երկու երկրի 30 փաստաբան տեսակապի միջոցով իրական ժամանակահատվածում համատեղ իրավական վարժանքների են մասնակցել:

Նշված նախաձեռնության իրագործումը հնարավոր է դարձել Հայաստանի և Ռուսաստանի փաստաբանների պալատների կողմից Փաստաբանական գործունեության հիմնարար սկզբունքների վերաբերյալ խարտիան 2016 թվականի մայիսի 19-ին Սանկտ-Պետերբուրգում ստորագրելու շնորհիվ:

Դասընթացը տևել է 3 ամիս: 2018 թվականի մարտի 30-ին Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը և Եվրոպայի Խորհրդի ներկայացուցիչ Տիգրան Կարապետյանը ծրագրի շրջանավարտներին ավարտական հավաստագրեր են հանձնել:





ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է «ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍ» ԾՐԱԳՐԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻՆ



2018 թվականի մայիսի 31-ի Փաստաբանների պալատը հյուրընկալել է Գործարար կառավարման մագիստրոս» (Executive Master of Business Administration) կրթական ծրագրի ղեկավարների համար նախատեսված առաջին հայալեզու մագիստրոսական ծրագրի ներկայացուցիչներին:

Այցի հիմնական նպատակն էր ծանոթանալ կառույցի կառավարման մոդելին և կառավարման համակարգին, ինչպես նաև քննարկել գործադիր, օրենսդիր և դատական համակարգերում փաստաբանների դերի և գործունեության հարցերը:

Մագիստրոսական ծրագրի խմբի ղեկավարն էր Տնտեսական համագործակցության եվրոպական լիգայի խորհրդի (Բրյուսել) անդամ, Մերձավոր Արևելքի Որակի Ասոցիացիայի (Դուբայ, ԱՄԷ) հիմնադիր անդամ, Լիբանանի Saint Joseph, Քուվեյթի Պարսից Ծոցի Գիտության և Տեխնոլոգիայի, Ֆրանսիայի Փարիզ 9-Դոֆին համալսարանների Հայաստանի Ամերիկյան Համալսարանի դասախոս Բաֆֆի Սեմերջյանը:

Ծրագրի 25 մասնակիցներից բաղկացած խումբը առողջապահական, ֆինանսական, ապահովագրական, արդյունաբերական բնագավառների մասնագետներ էին:



Մագիստրոսական ծրագրի մասնակիցները շրջայց են կատարել Փաստաբանների պալատի շենքում՝ այցելելով Փաստաբանական դպրոց և Հանրային պաշտպանի գրասենյակ:

Նշված մագիստրոսական ծրագիրը մեկնարկել է 2017 թվականի աշնանը, տևողությունը մեկ տարի է: Ծրագրի դասախոսական անձնակազմը միջազգային հայտնի համալսարանների շրջանավարտներ են, ինչպիսին են օրինակ՝ Bristol, Binghamton, Concordia, Harvard, Imperial College of London, Paris I Pantheon–La Sorbonne և այլն: Դասախոսական անձնակազմը լավագույն փորձի փոխանակում է իրականացնում մասնակիցների հետ, իսկ դասավանդվող առարկաները կառավարման անհրաժեշտ և թիրախային ուղղություններն են, որոնք նպաստում են ծրագրի մասնակիցների հմտությունների զարգացմանը:

ԷՍՏՈՆԻԱՅԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

Փաստաբանների պալատը 2018 թվականի սեպտեմբերի 19-ին հյուրընկալել է մոտ 30 էստոնացի դատական կատարողներ և սնանկության կառավարիչներ՝ էստոնիայի դատական կատարողների և սնանկության կառավարիչների պալատի նախագահ Մատի Կադակի և Դատական միության նախագահ Յանեկ Փուլի գլխավորությամբ:



Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը հյուրերին ներկայացրել է ՀՀ փաստաբանների պալատի կառուցվածքը, փաստաբանների գործունեության իրավական հիմքերը ու հարաբերությունները պետական մարմինների հետ, փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու կարգը, ինչպես տեղացի, այնպես էլ արտասահմանցի իրավաբանների համար:

Հանդիպման ընթացքում հյուրերը հետաքրքրություն են ցուցաբերել Փաստաբանական դպրոցի և Հանրային պաշտպանի գրասենյակի նկատմամբ:

Հանդիպմանը ներկա սնանկության գործերով կառավարիչ, փաստաբան



Տիգրան Սահակյանը պատասխանել է Էստոնիայի սնանկության կառավարիչների միության անդամների հարցերին, որոնք վերաբերվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքին:

Հանդիպման ավարտին Էստոնացի հարկադիր կատարողներն ու սնանկության կառավարիչները շրջայց են կատարել Փաստաբանների պալատում, Փաստաբանների դպրոցում և հանրային պաշտպանի գրասենյակում:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՄՈՆԴԵԼԻԵ ՔԱՂԱՔԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՑԵԼԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ



Փաստաբանների պալատում 2018 հոկտեմբերի 29-ին հյուրընկալվել է Ֆրանսիայի Մոնպելիե քաղաքի փաստաբանների միության պատվիրակությունը՝ միության նախագահ Բերնարդ Բերալի գլխավորությամբ:

Փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը ողջունել է հյուրերին Փաստաբանների պալատում և նշել, որ Ֆրանսիային համարում է



Փաստաբանների պալատի բարեկամը և միջազգային համագործակցության ոլորտում ամենաակտիվ հարաբերությունները հենց Ֆրանսիայի հետ են: Անգամ Հայաստանի փաստաբանական դպրոցի մոդելը վերցված է ֆրանսիականից:

Մոնպելիեյի փաստաբանների միության նախագահ Բերնարդ Բերալը շնորհակալություն է հայտնել Փաստաբանների պալատին ջերմ ընդունելության համար և նշել է, որ Հայաստանի փաստաբանների պալատի հետ համագործակցությունը սկսվել է վաղուց: Նա նշել է նաև, որ այդ հարաբերությունների զարգացման գործում մեծ ավանդ ունի Մոնպելիեյի փաստաբանների միության նախկին նախագահ Լյուք Քիրքյաչարյանը:

Բերնարդ Բերալը նաև նշել է, որ միջոցառումը Ֆրանկոֆոնիայի օրերին է հաջորդել և երկու պալատների հարաբերությունները և գործունեությունը համապատասխանում է Ֆրանկոֆոնիայի՝ «ապրել միասին» կարգախոսին:

Հանդիպմանը բացման խոսքով հանդես է եկել նաև Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Ջոնաթան Լաքոտը, ով նշել է, որ իր բացառիկությամբ տարբերվող Ֆրանկոֆոնիայի օրերին ձեռք բերված հաջողությունները անհրաժեշտ է կապիտալիզացնել և զարգացնել:

Մասնագիտական քննարկումների ընթացքում հայ մասնագետները ֆրանսիացի գործընկերներին ներկայացրել են օտարերկրյա ներդրումների իրավական կարգավորումներին վերաբերող մանրամասներ:

Ավարտին՝ ՀՀ փաստաբանների պալատի, Մոնպելիեյի փաստաբանների միության և նույն միության Մարդու իրավունքների ինստիտուտի միջև կնքվել է մարդու իրավունքների պաշտպանության խթանմանն ուղղված համագործակցության համաձայնագիր:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՌԻԿՈՒԹՅԱՆԸ

2018 թվականի նոյեմբերին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի պատվիրակությունը մասնակցել է Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կայացած միջազգային համաժողովին, որը կազմակերպել էին Վրաստանի փաստաբանների միությունը, Եվրոպայի խորհուրդը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, Եվրոպայի փաստաբանների միությունը:

Համաժողովն անցկացվել էր «Փաստաբանի մասնագիտության բացառիկությունը» խորագրով:



Համաժողովին մասնակցել են Վրաստանի, Հայաստանի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ավստրիայի, Լեհաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Ադրբեջանի, Թուրքիայի, փաստաբանական միությունների ներկայացուցիչները, ինչպես նաև Փաստաբանների Եվրոպական ասոցիացիայի նախագահ Մարիա Սլազակը:

Համաժողովին շոշափվել են փաստաբանական ինստիտուտի վերաբերող մի շարք կարևորագույն հարցեր: Մասնավորապես՝

- փաստաբանի մասնագիտության բացառիկությունը.
- իրավաբանական ծառայությունների պաշտպանությունը.
- փաստաբանի մասնագիտություն մուտք գործելու Եվրոպական ստանդարտները և առաջատար փորձը.
- փաստաբանական միությունների և անհատ փաստաբանների դերը անվճար իրավաբանական ծառայությունների ապահովման գործընթացում.
- փաստաբանի մասնագիտության վերաբերյալ Եվրոպական կոնվենցիայի ստեղծման տեսլականը:

Հայաստանյան պատվիրակությունը ներկայացրել է ՀՀ փաստաբանների պալատի և Փաստաբանական դպրոցի փորձը: Հերթական անգամ հատուկ ուշադրության է արժանացել փաստաբանի մասնագիտություն մուտք գործելու հայաստանյան ընթացակարգերը և Փաստաբանական դպրոցի գործունեությունը:



Համաժողովի առանցքային հարցն է հանդիսացել փաստաբանի մասնագիտության վերաբերյալ Եվրոպական կոնվենցիայի ստեղծման հեռանկարը: Միջազգային մի շարք հեղինակավոր փորձագետների կողմից ներկայացվել է փաստաբանի մասնագիտության կոնվենցիոն կարգավորման անհրաժեշտությունը: Զուգահեռներ են անցկացվել այլ մասնագիտությունների հետ, որոնք ունեն համապատասխան կարգավորում:

Քննարկումների արդյունքում, համաժողովի ավարտին մասնակիցների միաձայն որոշմամբ ընդունվել է միասնական դիմում-հայտարարություն՝ Փաստաբանի մասնագիտության վերաբերյալ Եվրոպական կոնվենցիայի ստեղծմանն օժանդակելու մասին:

Փաստաբանների համաժողովում ընդունվել են նաև հետևյալ հայտարարությունները՝ «Պետությունը իր քաղաքացիներին պարտավոր է ապահովել արդարադատության մատչելիությամբ՝ երաշխավորելով, որ բոլոր քաղաքացիները, ովքեր ունեն ֆինանսական դժվարություններ պետք է հնարավորություն ունենան փաստաբանի միջոցով ստանալու պրոֆեսիոնալ իրավաբանական խորհրդատվություն և ներկայացուցչություն:

Այսպիսով.

✓ փաստաբանների պալատը պետք է աջակցի կառավարության կողմից իրավաբանական օգնության ծրագրերի ընդլայնմանը

✓ փաստաբանների պալատի կողմից պետք է մշակվեն անվճար իրավաբանական օգնության (pro bono) տրամադրման ձևաչափեր.

✓ փաստաբանների պալատը պետք է կառավարությունում հանդես գա անվճար իրավաբանական ծառայություն մատուցած փաստաբանին փոխհատուցում տրամադրելու նախաձեռնությամբ (օր. հարկային բեռի թեթևացում):

Վստահորդի լավագույն շահը պահանջում է, որ իրավաբանական օգնությունը տրամադրվի փաստաբանների միջոցով, որովհետև՝

1. փաստաբանների անկախությունը, մասնագիտական կոնֆիդենցիալությունն (փաստաբանական գաղտնիքը) երաշխավորվում է օրենքով,

2. փաստաբաններն ունեն մասնագիտական կրթություն և անցնում են պարբերական վերապատրաստումներ,

3. փաստաբանները գործում են վարքագծի կանոնագրքի համաձայն, որը վերահսկվում է փաստաբանների պալատի կողմից: Վերջինս կարող է կիրառել կարգապահական տույժեր, եթե փաստաբանների կողմից խախտվում են փաստաբանի վարքագծի կանոնագրքի դրույթները,

4. փաստաբանների մասնագիտական գործունեության պատասխանատվությունը, որպես կանոն երաշխավորվում է:



**ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՒ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱՐՑԵՐԻՆ**

Փաստաբանների պալատում 2018 թվականի նոյեմբերի 16-ին, անցկացվել է «Փաստական տեղեկություններ. իրավունքի գերակայության, մարդու իրավունքների, կոռուպցիայի, արդարադատության մատչելիության մարտահրավերները» խորագրով հանդիպում-քննարկում, որին մասնակցել են Փաստաբանական դպրոցի ունկնդիրներ, դասախոսներ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ:



Քննարկումն իրականացվել է ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի թմրադեղերի դեմ միջազգային պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի ծրագրի շրջանակներում, որն իրականացրել է Միացյալ Թագավորության Նոթինգեմի իրավաբանության դպրոցը՝ Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի հետ համատեղ:

Հանդիպում-քննարկումը նախապատրաստական գործառույթ ուներ՝ Հայաստանում մարդու իրավունքների և կոռուպցիայի հիմնական խնդիրներին առնչվող փորձառության և տարբեր շահառուների տեսանկյուններից մարտահրավերների վերաբերյալ:





ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՊԱԼԱՏԻ ՊԱՏԿԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ





2018 թվականի դեկտեմբերի 13-ին Փաստաբանների պալատը Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հետ համագործակցության շրջանակներում հյուրընկալել է Գերմանիայի փաստաբանների դաշնային պալատի գործադիր տնօրեն, փաստաբան՝ դոկտոր Վերոնիկա Հոռերին, Գերմանիայի Թուրինգիա քաղաքի փաստաբանների պալատի նախագահ, Գերմանիայի դաշնային փաստաբանների պալատի մամուլի և հանրության հետ աշխատանքի հանձնաժողովի անդամ, փաստաբան՝ Յան Հելգե Քեսթելին և Գերմանիայի դաշնային փաստաբանների պալատի հասարակության հետ կապերի գծով գործադիր տնօրեն-մամուլի խոսնակ, փաստաբան Շտեֆանի Բեյրիխին:

Այցի ընթացքում Յան Քեսթելը և Շտեֆանի Բեյրիխը հայ փաստաբանների համար վարել է վերապատրաստման դասընթաց՝ «Փաստաբանների պալատների կողմից լրատվամիջոցների և հանրության հետ տարվող աշխատանքները» թեմայով:





ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ «ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՅԻԿ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ



2018 թվականի մարտի 9-ին տեղի է ունեցել «Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների փաստաբանական միությունների և իրավաբանական համայնքների ընթացիկ մարտահրավերները և համագործակցության հնարավորությունները» խորագրով համաժողով, որը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավաբանական համայնքների խորհրդի (CCBE) կողմից՝ Եվրոպայի խորհրդի «Աջակցություն Հայաստանում դատական բարեփոխումների իրականացմանը» ծրագրի շրջանակներում:

Համաժողովը Հայաստանում իրականացվող առաջին նման միջոցառումն էր, որին մասնակցում էին Մոլդովայի, Բելառուսի, Ուկրաինայի, Ռուսաստանի, Վրաստանի, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Չեխիայի, Լեհաստանի ներկայացուցիչները:

Համաժողովի հիմնական թեմաներն էին «Փաստաբանի և դատարանի միջև հարաբերությունները, դատարանի նկատմամբ հարգալից վերաբերմունքը», «Տեղեկատվության պաշտպանությունը» և «Էթիկայի կանոնների շրջանակը. անձնական, սոցիալական և մասնագիտական ասպեկտները»:

Միջոցառման եզրափակիչ մասում ՀՀ փաստաբանական դպրոցի և Իռլանդիայի փաստաբանական դպրոցի միջև ստորագրվել է փոխգործակցության հուշագիր:

Համաժողովի հաջորդ օրը Փաստաբանների պալատի միջազգային հյուրերը հյուրընկալվել են Փաստաբանների պալատում, կատարել են շրջայց շենքում, ինչին հաջորդել է հյուրերի մշակութային ծրագիրը՝ այցելություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և «Արարատ» կոնյակի գործարան:



Լուսանկարներ 09.03.2018թ. Երևանում տեղի ունեցած միջազգային համաժողովից



ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱԶՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

■ ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2018 թվականի ընթացքում իր ակտիվ գործունեությունն է շարունակել Փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը:

2011 թվականից սկսած գիտավերլուծական կենտրոնը Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի հետ ունեցած պայմանավորվածության համաձայն սահմանադրական դատարանում քննվող գործերով որպես երրորդ կողմի կարծիք (amicus curiae) ներկայացնում է իր գրավոր մեկնաբանությունը՝ վիճարկվող նորմերի սահմանադրականության վերաբերյալ:

2018 թվականի ընթացքում ՀՀ սահմանադրական դատարանին **11 գործով** Փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը տրամադրել է գրավոր մեկնաբանություն:

■ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ

Փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը 2018 թվականի ապրիլին փաստաբանների համար կազմակերպել է շախմատի մրցաշար:

Փաստաբանների շախմատի մրցաշարի պատվավոր հյուրն է եղել սպորտի վարպետ, շախմատիստուհի Արիանա Կառլին:

Մրցաշարին աջակցել և համաժամանակյա խաղ են անցկացրել գրոսմայստերներ, օլիմպիական, Եվրոպայի և մի շարք այլ հեղինակավոր մրցաշարերի հաղթողներ, բազմակի չեմպիոններ Արտաշես Մինասյանն ու Գաբրիել Սարգսյանը:

Մրցաշարին մասնակցել է 37 փաստաբան: Խաղն անց է կացվել 7 + 5 վայրկյան հավելմամբ 7 խաղափուլով, շվեյցարական մրցակարգով:

Խաղի առաջին մրցանակակիր է ճանաչվել Կարեն Մեժլումյանը (արտոնագիր № 1844), երկրորդ պատվավոր տեղը զբաղեցրել է Սերգեյ Ամիրխանյանը (արտոնագիր № 874), երրորդ տեղը գրավել է Աշոտ Շահմուրադյանը (արտոնագիր № 595):

Առաջնությունը վարել է միջազգային կարգի մրցավար Վահագն Խաչատրյանը:



Լուսանկարներ փաստաբանների շախմատի 14.04.2018թ. մրցաշարից





ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Փաստաբան Եզեզեյան օժանդակություն» ծրագրի շրջանակներում 51 փաստաբանի հանձնվել են մեկ տարվա անդամավճարի վճարման վերաբերյալ հավաստագրեր



2018 թվականի ապրիլի 12-ին «Փաստաբան Եզեզեյան օժանդակություն» ծրագրի շրջանակներում 51 փաստաբանի հանձնվել են մեկ տարվա անդամավճարի վճարման վերաբերյալ հավաստագրեր:

«Փաստաբան Եզեզեյան օժանդակություն» ծրագրի շահառուների թիվն այս տարիների ընթացքում հասել է 260-ի:



Շահառուներին որոշելու նպատակով ձևավորված հանձնաժողովն, ըստ համապատասխան կարգով նշված առաջնահերթության, նախապատվություն է տվել հետևյալ փաստաբաններին՝

✓ 60-69 տարեկան փաստաբաններին՝ ովքեր չունեն մշտական աշխատանք, ոչ ավել, քան 10 փաստաբան.

✓ 2-րդ կամ 3-րդ կարգի հաշմանդամ փաստաբաններին՝ ոչ ավել, քան 5 փաստաբան.

✓ միայնակ մայր հանդիսացող փաստաբաններին՝ ոչ ավել, քան 7 փաստաբան.

✓ ընտանիքում պարտադիր զինվորական ծառայության զորակոչված (զինվորական ծառայության մեջ գտնվող) զավակ ունեցող փաստաբաններին՝ ոչ ավել, քան 10 փաստաբան.

✓ նյութական դժվարություններ ունեցող մարզի փաստաբաններին՝ ոչ ավել, քան 10 փաստաբան, յուրաքանչյուր մարզից մեկ փաստաբան՝ մարզային համակարգողի գրավոր առաջարկով.

✓ երկու կամ ավելի անչափահաս երեխաներ ունեցող փաստաբաններին՝ ոչ ավել, քան 8 փաստաբան:

Հաղթանակի և խաղաղության տոնը Փաստաբանների պալատում

Հաղթանակի և խաղաղության տոնի կապակցությամբ Փաստաբանների պալատը 11.05.2018 թվականին կազմակերպել էր Հայրենական Մեծ պատերազմին մասնակցած վետերան-փաստաբանների մեծարման միջոցառում:



Նարիման Միրզաբեկյանը



Հրաչիկ Գոգինյան



Մայիս Ավեփիսյան

Փաստաբանների պալատի վետերան-փաստաբաններ՝ Նարիման Միրզաբեկյանը (94 տարեկան), Մայիս Ավետիսյանը (93 տարեկան) և Հրաչիկ Գոգինյանն (93 տարեկան) այն հազարավոր հայորդիների շարքերում էին, ովքեր ներկայացել են շրջանային զինկոմիսարիատներ ու կամավոր զինվորագրվել հայրենիքի պաշտպանությանը:

Յուրաքանչյուր տարի Փաստաբանների պալատում հավաքվելու գեղեցիկ ավանդույթը գնահատելով՝ վետերանները նշել են, որ մշտապես հետևում են փաստաբանական համայնքի նորություններին, ուրախանում են փաստաբանների գրանցած հաղթանակներով:

Հանդիպման ընթացքում վետերան փաստաբանները դրվագներ են հիշել իրենց աշխատանքային համատեղ կենսագրությունից, պատերազմում տեսած զրկանքներից՝ նշելով, որ կյանքն իր անակնկալներով է հետաքրքիր և յուրաքանչյուր դժվարություն ավելի ամուր է դարձնում մարդուն:





Երեխաների պաշտպանության միջազգային օրը Փաստաբանների պալատում



Արդեն իսկ ձևավորված ավանդույթի համաձայն Փաստաբանների պալատը յուրաքանչյուր տարի նշում է երեխաների պաշտպանության միջազգային օրը:

2018 թվականի հունիսի 1-ին նույնպես Փաստաբանների պալատի վարչական շենքում կազմակերպվել էր Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառում:

2018 թվականի հունիսի 1-ին Փաստաբանների պալատում բացվել էր «Ես քննադատում եմ» խորագրով մանկապատանեկան հեղինակային նկարների ցուցահանդես:

Երեխաների պաշտպանության օրվան ընդառաջ Փաստաբանների պալատի հայտարարած մրցույթին մասնակցել էր 80-ից ավելի երեխա Հայաստանի Հանրապետության ողջ տարածքից և Արցախից: Երեխաների երևակայությունն անսպառ էր, նրանք քննադատում էին անարդարությունը, խտրականությունը, կարգուկանոնի բացակայությունը, իրար չզիջելու տարածված սովորությունը:

Շատ աշխատանքներում ոչ միայն քննադատություն էր, այլև հույս՝ գեղեցիկ, պայծառ ապագայի, մարդասիրական օրինակների, լավատեսական գույների և քաղաքավարության տարածման հաղթանակի: Մրցութային նկարները մինչև



հունիսի մեկը հրապարակվել էին սոցիալական ցանցի տարբեր հարթակներում և ոգևորող արձագանքներ էին ստացել:

Մեծահասակները քննարկել էին հատկապես երեխաների տպավորիչ երևակայությունը, հարուստ գունապնակը և հասուն մոտեցումը իրականությանը: Հայտարարվել էր նաև խաղաղության, հայրենասիրության, ընկերության մասին կարգախոսների մրցույթ:

Հունիսի մեկին Փաստաբանների պալատի մրցույթներին մասնակցած բոլոր երեխաներին հանձնվել են մասնակցության հավաստագրեր և խորհրդանշական մրցանակներ: Ողջունելով մրցույթի մասնակիցներին՝ Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը արդարության թեմայով զրույց-դաս է անցկացրել նրանց հետ:

Երեխաներին ոգևորել և անակնկալներ են մատուցել նաև փաստաբանական և իրավաբանական գրասենյակները:

«Կոնսիզլերի փաստաբանական գրասենյակ»-ը, «Ի Էլ Էլ գործընկերություն» իրավաբանական գրասենյակը, «Խաչատուրով» փաստաբանական գրասենյակը, «Զոհրաբյան և գործընկերներ» փաստաբանական գրասենյակը, ԱՐԱՏՏԱ իրավաբանական ընկերությունն իրենց ընտրած հաղթող նկարների հեղինակներին պարգևատրել են պատվոգրով և նվերներ են հանձնել:





Երեխաներին նվերներով խրախուսել են նաև փաստաբան Լիանա Բայլանը, Փաստաբանների պալատի խորհրդի անդամ Սեդրակ Ասատրյանը, Փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Նելլի Հարությունյանը: Երեխաներից շատերը սիրով իրենց նկարները նվիրել են մրցանակ հանձնողներին:

Մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությանը հաջորդել է «Ձմերուկ» մանկական ժամանցի կենտրոնի կողմից կազմակերպված մանկական տոնական համերգային շոու ծրագիրը, որին իր մասնակցությունն էր բերել Մանուկների «Մոլորակ» մանկապատանեկան վոկալ ստուդիան: Երեխաների տոնն ամբողջացրել են ծիծաղաշարժ դեկորներով ֆոտոբուլթ, հեքիաթի հերոսները, տոնական հյուրասիրությունն ու մեծ տորթը:

■ Փաստաբանների պալատում նշվել է փաստաբանների միության նախկին նախագահ Միշա Փիլիպոսյանի փարեդարձը

2018 թվականի հուլիսի 11-ին Փաստաբանների պալատում նշվել է 1999-2004թթ. Հայաստանի փաստաբանների միության նախագահ Միշա Փիլիպոսյանի 80 ամյա հոբելյանը:

Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, շնորհավորելով հոբելյարին՝ նշել է, որ փաստաբանական համայնքում կարևորում են սերունդների համերաշխությունը, ավագ գործընկերների փորձի փոխանցումը:

Ծննդյան 80 ամյակի և փաստաբանական ինստիտուտի կայացման գործում ունեցած ավանդի համար Միշա Փիլիպոսյանը պարգևատրվել է պատվոգրով և ոսկեպատ կրծքանշանով:

Փաստաբանների միության նախկին նախագահը շնորհակալություն է հայտնել միջոցառման համար՝ նշելով, որ նման ուշադրությունը կարևոր է տարիքով ավագ փաստաբանների համար: Հիշելով փաստաբանությանը վերաբերող առաջին օրենքի ստեղծմանը իր մասնակցությունը՝ նա ներկաներին ասել է, որ այդ օրենքի հիմքում փաստաբանական համայնքի համախմբվածությունն էր և մեկ ընդհանուր պալատ ունենալու գաղափարը, ինչը տարիների ընթացքում ապացուցել է իր գործունակությունը: Նա հորդորել է գործընկերներին ետ չնայել և իրականացնել համայնքին վերաբերող բոլոր բարի նպատակները:

Փաստաբանների պալատի դահլիճի՝ նախագահների համար առանձնացված անկյունում փակցվել է նաև Միշա Փիլիպոսյանի նկարը և փաստաբանական ուղու վերաբերյալ տեղեկատվություն:



Միշտ Հայկազի Փիլիպոսյանը ծնվել է 1938 թվականին Թալինի շրջանի Մաստարա գյուղում (Արագածոտնի մարզ):

Փաստաբանությամբ սկսել է զբաղվել ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետն ավարտելուց հետո՝ 1968 թվականից:

1972 թվականին նշանակվել է Շահումյանի շրջանի իրավաբանական կոնսուլտացիայի վարիչ:

Պարբերաբար ընտրվել է ՀՀ փաստաբանների կոլեգիայի նախագահության անդամ:

1992-1996 թվականներին ընտրվել է Կոլեգիայի նախագահության նախագահի առաջին տեղակալ:

1996 թվականին ընտրվել է Կոլեգիայի նախագահության նախագահ:

Համահեղինակ է «ՀՀ փաստաբանական գործունեության մասին» ՀՀ առաջին օրենքին, որով էլ հետագայում ձևավորվել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների միությունը:

1999 թվականի մարտի 7-ին ՀՀ փաստաբանների միության հիմնադիր ժողովում ընտրվել է ՀՀՓՄ առաջին նախագահ:

1992-2012 թվականներին ընտրվել է փաստաբանների համագործակցության միջազգային միության փոխնախագահ՝ Հայաստանի Հանրապետությունից (Մոսկվա):



2003 թվականի մարտի 1-ին վերընտրվել է ՀՀՓՄ նախագահ՝ ձայների գերակշիռ մեծամասնությամբ:

2004 թվականի դեկտեմբերի 14-ին ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվեց «Փաստաբանության մասին» ՀՀ նոր օրենքը, որի հիմքով պետք է ձևավորվեր փաստաբանների պալատը:

2005-2009 թվականներին ղեկավարել է ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակը:

2009-2011 թվականներին աշխատել է ՀՊԳ-ում որպես փաստաբան:

Հայաստանի փաստաբանները ուսուցում են անցել Փարիզի փաստաբանական դպրոցում



Արաիկ Պեդրոսյան
(արտոնագիր № 2350)



Նարեկ Անյոնյան
(արտոնագիր № 2313)

Փարիզի փաստաբանների պալատի նախաձեռնությամբ յուրաքանչյուր տարի Հայաստանի ֆրանկոֆոն փաստաբաններից երկուսը մրցութային կարգով հնարավորություն են ստանում մասնակցել Փարիզի փաստաբանների պալատի կողմից կազմակերպվող «Միջազգային ստաժ» կրթական ծրագրին:

Նշված ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր պետության փաստաբանական համայնքների ներկայացուցիչներ՝ ըստ տվյալ պետության համար հատկացված քվոտաների քանակի (Հայաստանի համար հատկացված է երկու տեղ), հնարավորություն ունեն մասնակցելու երկամսյա կրթական ծրագրին, որի շրջանակներում ծրագրին մասնակցող փաստաբանը մեկ ամիս տեսական



ուսուցում է անցնում Փարիզի փաստաբանական դպրոցում իրավունքի ոլորտի տարբեր դասընթացների վերաբերյալ, իսկ հաջորդ մեկ ամսվա ընթացքում անցնում է գործնական պրակտիկա՝ Փարիզի փաստաբանական գրասենյակներում:

2018 թվականի համար ծրագիրն իրականացվել է ոչ միայն ֆրանսերեն, այլ նաև՝ անգլերեն լեզվին տիրապետող փաստաբանների համար: Փաստաբանների պալատը նույնպես ներկայացված է եղել ծրագրին, որին մասնակցելու համար հայտարարված մրցույթը հաղթահարել և դասընթացներին մասնակցել են **փաստաբաններ Նարեկ Անտոնյանը (արտոնագիր № 2313) և Արաիկ Պետրոսյանը (արտոնագիր № 2350):**

2018 թվականի դրությամբ նշված ծրագրին Հայաստանից մասնակցել է **14 փաստաբան:** Ծրագրին նախկինում հայ փաստաբանները հնարավորություն են ունեցել մասնակցելու բարերար Ռայմոն Եզեգեյանի աջակցությամբ, քանի որ վերջինս ծրագրին մասնակցողներին ապահովել է կացարանով, ինչպես նաև լրիվ կամ մասնակի աջակցել է ինքնաթիռի տոմսի արժեքի վճարման հարցում:



■ Ամանորին ընդառաջ փաստաբանները խրախուսվել են մի շարք անվանակարգերում

Արդեն իսկ ձևավորված ավանդույթին համապատասխան 2018 թվականի դեկտեմբերի 25-ին Փաստաբանների պալատում Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներին ընդառաջ կազմակերպվել էր տոնական միջոցառում:

Փաստաբանների պալատի ամենամյա ամանորյա միջոցառման ժամանակ, տեղի է ունեցել խրախուսական պատվոգրերի ու շնորհակալագրերի հանձնման արարողություն:

Խրախուսանքները փաստաբաններին, հանրային պաշտպաններին ու պալատի աշխատակազմի ներկայացուցիչներին է հանձնել պալատի նախագահ Արա Զոհրաբյանը:

Ցուցաբերած բարեխիղճ և պարտաճանաչ աշխատանքի համար Փաստաբանների պալատի աշխատակազմից պատվոգրերով են պարգևատրվել.

1. Փաստաբանների պալատի վերապատրաստման հարցերով համակարգող Անի Ղարիբյանը.
2. Փաստաբանների պալատի կարգապահական գործերը համակարգող Նոննա Համբարձումյանը.



3. Փաստաբանների պալատի ընդունարանի պատասխանատու Անժելիկա Մանուկյանը.

4. Փաստաբանների պալատի ընդունարանի պատասխանատու Արուսյակ Ֆահրադյանը.

5. ՀՊԳ ընդունարանի պատասխանատու Էլեն Բաբայանը.

6. Փաստաբանների պալատի պարետ-էներգետիկ Նորիկ Ղազարյանը.

7. Փաստաբանների պալատի անվտանգության աշխատակից Դավիթ Գևորգյանը.

8. ՀՊԳ ղեկավարի ավագ օգնական Քրիստինե Հայրապետյանը.

Հանրային պաշտպաններից տարբեր անվանակարգերում պատվոգրերով ու շնորհակալագրերով պարգևատրվել են.

1. ՀՊԳ Երևանի նստավայրի հանրային պաշտպաններ **Լուսինե Ասլանյանը, Դիաննա Ղազարյանը և Աշոտ Խլոյանը՝** ցուցաբերած ջանասիրության համար,



2. ՀՊԳ մարզային նստավայրերի հանրային պաշտպան **Արմեն Ներսիսյանը** և **Սեդրակ Մկրտչյանը՝** ցուցաբերած ջանասիրության համար,

1. Հանրային պաշտպան **Էդուարդ Աղաջանյանը՝** ՀՊԳ-ում ունեցած ավանդի համար,

2. ՀՊԳ մարզային նստավայրի քրեասիրավական ուղղվածության հանրային պաշտպան **Արմեն Աղամյանը, Վրեժ Ներկարարյանը, Էդգար Թովմասյանը՝** ցուցաբերած բարեխիղճ և պարտաճանաչ աշխատանքի համար,

3. Փաստաբան **Լիլիթ Պինգուլյանը՝** Pro Bono ծրագրի շրջանակներում ցուցաբերած ջանասիրության և բարեխիղճ աշխատանքի համար:

Մի շարք փաստաբաններ պարզևատրվել են շնորհակալագրերով ՋԼՍ ներկայացուցիչների հետ շփումներում ցուցաբերած բարձր պրոֆեսիոնալիզմի, փաստաբանների իրավունքների պաշտպանության, ինչպես նաև 2018 թվականի ապրիլյան քաղաքական իրադարձությունների



Ժամանակ բերման ենթարկված քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար.

1. Զգայուն քրեական գործերով զանգվածային լրատվամիջոցների հետ շփումներում դրսևորած բարձր պրոֆեսիոնալիզմի և հավասարակշռված վարքագծի համար՝ փաստաբաններ՝ **Հայկ Ալումյանը** և **Էրիկ Ալեքսանյանը**.

2. Քրեակատարողական հիմնարկում փաստաբանի խուզարկության փորձի հետ կապված բոլոր փաստաբանների իրավունքների պաշտպանության նպատակով ռազմավարական դատավարությանը մասնակցելու համար՝ փաստաբան **Մարինե Թովմասյանը**.

3. Փաստաբանների խնդիրներին արագ և ջանասիրաբար արձագանքելու համար՝ փաստաբան **Արտակ Նորայրի Խաչատրյանը**.

4. 2018 թվականի ապրիլյան իրադարձությունների ժամանակ բերման ենթարկված քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար՝ փաստաբաններ **Ամայա Մելքոնյանը, Անուշ Հարությունյանը, Անի Հալույանը, Սամվել Զաղինյանը, Սիրուշ Աղվանյանը, Հերմինե Միքայելյանը, Հայկ Պետրոսյանը, Մուրադ Ասրյանը, Կարինե Լալաբեկյանը, Լուսինե Վիրաբյանը** և **Գեորգի Մելիքյանը** :

Միջոցառման շրջանակներում բարձր առաջադիմության համար պարգևատրվել է նաև Փաստաբանական դպրոցի ունկնդիր Բակուր Գրիգորյանը:



ՀՀ ՓԱՏՏԱԲԱՆԱՆԵՐԻ ՊԱՍՏԻ ՄԱՐԿԻՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA






ՓԱՏՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

➤ Պալատի խորհրդի կարգապահական որոշումների շարունակական հրապարակում www.advocates.am ինտերնետային կայքի միջոցով.

Փաստաբանների պալատի կայքէջում «խորհրդի որոշումներ կարգապահական գործերով» բաժնում շարունակաբար հրապարակվում են կարգապահական գործերով բոլոր որոշումները: Ընդ որում՝ կայքում ներդրված հատուկ ֆիլտրման համակարգի միջոցով կայքն ավտոմատ գեներացնում է տվյալ որոշման հետ փոխկապակցված իրավական ակտերը, օրինակ՝ ըստ իրավական ակտի հասցեատիրոջ (փաստաբանի անվան և ազգանվան), վարքագծի կանոնագրքի համապատասխան կետի, ըստ որոշման եզրափակիչ մասի (կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ վարույթը կարճելու մասին որոշում), տույժի տեսակի և այլն:





➤ **Վարքագծի հարցերի վերաբերյալ քննարկումների կազմակերպում:**

«Փաստաբանների վերապատրաստման» կարգի համաձայն՝ Փաստաբանները պետք է վերապատրաստվեն «Փաստաբանի վարքագծի կանոնները (դեոնթոլոգիա)» առարկայի շրջանակներում հաստատված թեմաներով:

Փաստաբանների համար մասնագիտական վարվելակերպի թեմաներով վերապատրաստվելու հնարավորություն ընձեռելու նպատակով 2018 թվականին փաստաբանների պարտադիր վերապատրաստման դասընթացների ժամանակացույցում յուրաքանչյուր ամիս ներառված է եղել, որպես կանոն, երկուսից չորս դասընթաց «Փաստաբանի վարքագծի կանոնները (դեոնթոլոգիա)» թեմայով՝ ըստ առանձին ենթախնտիտուտների: Օրինակ՝ փաստաբանների փոխհարաբերությունները վստահորդների հետ, փաստաբանների փոխհարաբերությունները դատարանների կամ վարույթ իրականացնող մարմինների հետ և այլն:

«Փաստաբանի վարքագծի կանոնները (դեոնթոլոգիա)» թեմայով վերապատրաստման դասընթացները վարել են Փաստաբանների պալատի խորհրդի անդամները՝ առավել արդյունավետ դարձնելով Փաստաբանների պալատի խորհրդի փորձի փոխանակումը փաստաբանների հետ:





Հավելված թիվ 1

ռազմավարական ծրագրի կատարման
վերաբերյալ 2018թ. հաշվետվության

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ
համեմատության ժամանակահատվածը՝ 2017 - 2018 թվականներ**

| № | Փաստաբանների նկատմամբ 2018 թվականին հարուցված վարույթներ (քանակ) | 2017 | 2018 | տարբեր. թվային արտահայտմամբ | տարբեր. տոկոսային արտահայտմամբ |
|----|--|------|------|-----------------------------|--------------------------------|
| | | 194 | 200 | 6 | 3.09% |
| 1. | Փաստաբանների դեմ բողոքների հիման վրա հարուցված վարույթների թիվը ¹⁵ | 41 | 26 | - 15 | - 37% |
| 2. | Դատական սանկցիաների հիման վրա հարուցված վարույթների թիվը | 86 | 8 | - 78 | - 91% |
| 3. | Անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթների թիվը | 38 | 77 | 39 | 103% |
| 4. | Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված կարգապահական վարույթների թիվը | 29 | 89 | 60 | 207% |

¹⁵ Բողոքներ փաստաբանների վստահորդներից, քաղաքացիներից և դատավարական հակառակորդ կողմի փաստաբաններից:



Հավելված թիվ 2
 ռազմավարական ծրագրի կատարման
 վերաբերյալ 2018թ. հաշվետվության

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԴԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ
 ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

| № | 1. | | 2. | | 1 և 2 սյունակների համեմատական |
|-----|---|-----|--|----|-------------------------------------|
| | Փաստաբանների դեմ ստացված բողոքների ընդհանուր քանակը այդ թվում՝ | 203 | Փաստաբանների դեմ ներկայացված բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ, այդ թվում՝ | 34 | |
| 1.1 | փաստաբանների վստահողների և քաղաքացիների բողոքներ ¹⁶ | 171 | փաստաբանների վստահողների և քաղաքացիների բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ | 14 | 8% |
| 1.2 | փաստաբանների բողոքներ փաստաբանների դեմ | 10 | փաստաբանների բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ | 3 | 30% |
| 1.3 | այլ բողոքներ ¹⁷ | 16 | այլ բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ | 9 | 56% |

¹⁶ այդ թվում՝ դատավարական հակառակորդ կողմի բողոքներ:

¹⁷ այդ թվում՝ դատախազության, ոստիկանության, քննչական մարմինների, դատարանների և դատավորների (դատական սանկցիա չհանդիսացող բողոքներ) և այլն:



| | | | | | |
|-----|--------------------|---|--|---|------|
| 1.4 | դատական սանկցիաներ | 6 | 2018թ. ստացված դատական սանկցիաներ | 6 | 100% |
| | | | 2017թ. ստացված դատական սանկցիաներ, որոնց հիման վրա 49 հարուցվել է 2018թ. ¹⁸ | 2 | |

2018 թվականի հունվարից դեկտեմբեր (ներառյալ) ամիսների ընթացքում Փաստաբանների պալատում փաստաբանների դեմ ստացվել են ընդհանուրը **203 բողոք** (36 բողոքով կամ 15%-ով պակաս, քան 2017 թվականին), որոնցից գերակշիռ մասը՝ 197 բողոք ներկայացվել են քաղաքացիների և կազմակերպությունների կողմից, որոնք հանդիսանում են տվյալ փաստաբանի վստահորդ (այդ թվում՝ նախկին վստահորդ) կամ փաստաբանի վստահորդի հակառակորդ կողմ, կամ փաստաբանի հետ կոնկրետ գործով առնչվող պետական մարմիններ (դատախազություն, քննչական մարմիններ և այլն):

Փաստաբանների դեմ ներկայացված բողոքների և փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումների ընդհանուր վիճակագրական թվերի համեմատական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ փաստաբանների դեմ ներկայացված ընդհանուր **197 բողոքներից կարգապահական վարույթ հարուցվել է ընդամենը 26 բողոքի հիման վրա**, այսինքն՝ փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվել է ստացված բողոքների ընդհանուր թվի 13%-ը կազմող դեպքերում: Բողոքների (առանց դատական սանկցիայի) հիման վրա հարուցված կարգապահական վարույթները կազմում են փաստաբանների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների ընդհանուր թվի **13%-ը**:

Բողոքների¹⁹ հիման վրա հարուցված կարգապահական 203 վարույթից 8-ի հիմքում ընկած են դատական սանկցիա կիրառելու մասին դատարանների որոշումները, ինչը կազմում է հարուցված կարգապահական վարույթների **4%-ը**:

¹⁸ 2018 թվականի ընթացքում փաստաբանների պալատում մուտքագրված դատական սանկցիաների և նույն ժամանակահատվածում դատական սանկցիաների հիման վրա հարուցված կարգապահական վարույթների տարբերությունը (2 գործով) բխում է նրանից, որ 2018 թվականի հունվարին կարգապահական վարույթ է հարուցվել 2017 թվականի դեկտեմբերին մուտքագրված 2 դատական սանկցիաների հիման վրա:

¹⁹ Տվյալ դեպքում որպես բողոք են հաշվառվել փաստաբանների դեմ քաղաքացիների, իրավաբանական անձանց, քննչական մարմիններին կողմից ներկայացված բողոքները, ինչպես նաև դատական սանկցիաները:



Դատական սանկցիան փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և՛ առիթ է և՛ հիմք, ընդ որում՝ պարտադիր հիմք:





Հավելված թիվ 3
 ռազմավարական ծրագրի կատարման
 վերաբերյալ 2018թ. հաշվետվության

2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՔՆՆՎԱԾ * ԵՎ ԱՎԱՐՏՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

| Քննված կարգապահական գործերի ընդհանուր քանակը՝ 238 | | | |
|--|-------------------|--|-------------------|
| Կարճված վարույթներ՝ | | Կարգապահական տույժով ավարտված վարույթներ՝ | |
| 71 (30%) այդ թվում՝ | | 167 (70%) այդ թվում՝ | |
| Բողոքի (սանկցիայի) հիմքով հարուցված և քննված կարգապահական վարույթների քանակը՝ 105²⁰, որից * | | | |
| Բողոքի հիմքով հարուցված վարույթի կարճում | 37 35% | Բողոքի հիմքով հարուցված վարույթով տույժի որոշում | 68 65% |
| Անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված և քննված կարգապահական վարույթների քանակը՝ 76, որից | | | |
| Անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված վարույթի կարճում ** | 14 18% | Անդամավճարը չվճարելու հիմքով տույժի որոշում | 62 82% |
| Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված և քննված կարգապահական վարույթների քանակը՝ 57, որից | | | |
| Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված վարույթի կարճում *** | 20 35% | Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով տույժի որոշում | 37 65% |

²⁰ Գործերի մի մասը կազմում է 2017թ. հարուցված գործերը (այդ թվում՝ դատական սանկցիաների հիման վրա), որոնք քննվել են 2018թ.



* 2018 թվականին քննվել են կարգապահական գործեր, որոնք հարուցվել են մինչև 2018 թվականը:

** կարգապահական վարույթները կարճվել են փաստաբանի նկատմամբ արտոնություն կիրառելու հիմքով (առաջին անգամ հարուցված վարույթի շրջանակներում փաստաբանի կողմից անդամավճարն ամբողջությամբ վճարվելու դեպքում վարույթը կարճվում է):

*** կարճվել են արտոնություն կիրառելու հիմքով (առաջին անգամ հարուցված վարույթի շրջանակներում փաստաբանի կողմից դասընթացը հաջորդ կիսամյակ իր հաշվին անցնելու դիմում ներկայացնելու դեպքում վարույթը կարճվում է):





Հավելված թիվ 4
 ռազմավարական ծրագրի կատարման
 վերաբերյալ 2018թ. հաշվետվության

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ
 ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

համեմատական ժամանակահատված՝ 2017 և 2018 թվականներ

| № | Վիճակագրական տվյալի չափանիշը (համեմատության առարկան) | 2017 | 2018 | տարբերությունը թվային արտահայտմամբ | տարբերությունը տոկոսային արտահայտմամբ |
|----------|---|-------------|-------------|---|--|
| 1 | Փաստաբանների պալատի նախագահի որոշումների ընդհանուր թիվը | 500 | 498 | -2 | - 0.40% |
| 2 | Փաստաբանների պալատի նախագահի հրամանների թիվը | 262 | 320 | 58 | 22.14% |





Հավելված թիվ 5
 ռազմավարական ծրագրի կատարման
 վերաբերյալ 2018թ. հաշվետվության

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

համեմատական ժամանակահատված՝ 2017 և 2018 թվականներ

| № | Վիճակագրական տվյալի չափանիշը (համեմատության առարկան) | 2017 | 2018 | տարբերությունը թվային արտահայտմամբ | տարբերությունը տոկոսային արտահայտմամբ |
|----------|---|-------------|-------------|---|--|
| 1 | Մտից փաստաթղթերի ընդհանուր թիվը | 3382 | 3816 | 434 | 12.83% |
| 2 | Ելից փաստաթղթերի ընդհանուր թիվը՝ ներառյալ կարգապահական գործերով | 1783 | 1861 | 78 | 4.37% |





Հավելված թիվ 6

ռազմավարական ծրագրի կատարման
վերաբերյալ 2018թ. հաշվետվության

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

| № | Վիճակագրական տվյալի չափանիշը | Վիճակագրական տվյալը |
|----------|--|----------------------------|
| 1 | Խորհրդի ընթացիկ նիստերի քանակը | 23 |
| 3 | Ընթացիկ նիստերով խորհրդի որոշումների ընդհանուր քանակը | 207 |
| 4 | Խորհրդի կարգապահական գործերով նիստերի քանակը | 315 |
| 5 | Կարգապահական գործերով խորհրդի որոշումների ընդհանուր քանակը | 240 |

2018 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի խորհուրդը առանձին ակտի ձևով կայացրել է 447 որոշում:





Հավելված թիվ 7

ռազմավարական ծրագրի կատարման
վերաբերյալ 2018թ. հաշվետվության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ²¹

ՀՊԳ ՎԱՐԱԾ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակահատված՝ 01.01.2018 - 31.12.2018թթ.

| | | |
|---|---|------|
| 1 | հանրային պաշտպանների հաստիքների թիվը | 54 |
| 2 | հաշվետու ժամանակաշրջանում վարած գործերի թիվը՝ | 6137 |
| 3 | հաշվետու ժամանակաշրջանում ընթացիկ գործերի թիվը՝ | 1890 |
| 4 | հաշվետու ժամանակաշրջանում հրաժարումների և փոխանցված գործերի թիվը՝ | 1078 |
| 5 | հաշվետու ժամանակաշրջանում ավարտված գործերի թիվը՝ | 3169 |

| Ա. | Նախաքննության փուլում վարած գործերի վերաբերյալ | |
|---|---|-------------|
| 1 | նախաքննության փուլում վարած գործերի թիվը՝ | 2515 |
| որից | | |
| 1.1 | նախաքննության փուլում ընթացիկ գործերի թիվը՝ | 651 |
| 1.2 | նախաքննության փուլում հրաժարումների և փոխանցումների գործերի թիվը՝ | 553 |
| 1.3 | նախաքննության փուլում ավարտված գործերի թիվը՝ | 1311 |
| Նախաքննության փուլում ավարտված գործերով արձանագրված արդյունքները | | |
| 1 | ամբողջությամբ կարճված գործերի թիվ | 503 |
| որից | | |
| 1.1 | արդարացնող հիմքով կարճված գործերի թիվը | 308 |
| 1.2 | ոչ արդարացնող հիմքով կարճված գործերի թիվը | 195 |
| 2 | մասով կարճված գործերի թիվը | 57 |
| որից | | |
| 2.1 | արդարացնող հիմքով կարճումների թիվը | 40 |
| 2.2 | ոչ արդարացնող հիմքով կարճումների թիվը | 17 |
| 3 | դատարան ուղարկված գործերի թիվը | 735 |
| 4 | արարքն ավելի մեղմ հողվածով վերաորակումների (առաջադրված մեղադրանքների) թիվը՝ | 116 |
| 5 | այլ | 35 |
| Ընդամենը՝ | | 1446 |

²¹ Հաշվետվությունը կարող է պարունակել ծրագրային որոշ անճշտություններ:



| Բ. | Առաջին ատյանի դատարանում վարած գործերի վերաբերյալ | |
|---|--|-------------|
| 1 | առաջին ատյանի դատարանում վարած գործերի թիվը՝ | 2996 |
| որից | | |
| 1.1 | առաջին ատյանի դատարանում ընթացիկ գործերի թիվը՝ | 1072 |
| 1.2 | առաջին ատյանի դատարանում հրաժարումների և փոխանցումների գործերի թիվը՝ | 468 |
| 1.3 | առաջին ատյանի դատարանում ավարտված գործերի թիվը՝ | 1456 |
| Առաջին ատյանի դատարանում ավարտված գործերով արձանագրված արդյունքները | | |
| 1 | լրիվ արդարացումների թիվը՝ | 31 |
| 2 | մասնակի արդարացումների թիվը՝ | 13 |
| 3 | ամբողջությամբ կարճված գործերի թիվը՝ | 155 |
| որից | | |
| 3.1 | արդարացնող հիմքով կարճումների թիվը՝ | 23 |
| 3.2 | ոչ արդարացնող հիմքով կարճումների թիվը՝ | 224 |
| 4 | մասով կարճումների թիվը՝ | 7 |
| 5 | քրեական պատասխանատվությունից ազատումների թիվը՝ | 25 |
| 6 | պատժից ազատումների թիվը՝ | 85 |
| 7 | օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատժի նշանակումների թիվը՝ | 8 |
| 8 | պայմանականորեն չկիրառված պատիժների թիվը՝ | 352 |
| 9 | սանկցիայով նախատեսված նվազ խիստ պատժատեսակի նշանակումների թիվը՝ | 32 |
| 10 | բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման թիվը՝ | 58 |
| 11 | դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառումների թիվը՝ | 16 |
| 12 | նշանակված տուգանքների թիվը | 308 |
| 13 | նվազ ծանր հոդվածով վերաորակումների կամ փոփոխված մեղադրանքների թիվը | 32 |
| 14 | այլ մեղադրական դատավճիռների թիվը՝ | 307 |
| 15 | այլ | 60 |
| Ընդամենը՝ | | 1581 |

Առաջին ատյանի դատարանի բողոքարկված դատական ակտերի թիվը՝ 164

| Գ. | Վերաքննիչ դատարանում վարած գործերի վերաբերյալ | |
|--|--|-----|
| 1 | վերաքննիչ դատարանում վարած գործերի թիվը՝ | 535 |
| որից | | |
| 1.1 | վերաքննիչ դատարանում ընթացիկ գործերի թիվը՝ | 109 |
| 1.2 | վերաքննիչ դատարանում հրաժարումների և փոխանցումների գործերի թիվը՝ | 51 |
| 1.3 | վերաքննիչ դատարանում ավարտված գործերի թիվը՝ | 375 |
| Վերաքննիչ դատարանում ավարտված գործերով արձանագրված | | |



| արդյունքները | | |
|---------------------|---|------------|
| 1 | վերաքննիչ դատարանում պաշտպանական կողմի բերած՝ բավարարված բողոքների թիվը | 78 |
| այդ թվում՝ | | |
| 1.1 | արդարացվել է լրիվ | 4 |
| 1.2 | արդարացվել է մասնակի | 0 |
| 1.3 | կարճվել է ամբողջությամբ | 8 |
| 1.4 | կարճվել է մասով | 2 |
| 1.5 | արարքը վերաորակվել է ավելի մեղմ հողվածով | 3 |
| 1.6 | պատիժը մեղմացվել է | 9 |
| 1.7 | կիրառվել է ՀՀ ՔՕ 64-րդ հոդված | 4 |
| 1.8 | կիրառվել է ՀՀ ՔՕ 70-րդ հոդված | 20 |
| 1.9 | պատժից ազատվել է | 3 |
| 1.10 | քրեական պատասխանատվությունից ազատվել է | 1 |
| 1.11 | կիրառվել է համաներում | 21 |
| 1.12 | բավարարվել է նյութական և (կամ) դատավարական իրավունքի խախտման հիմքով այլ պահանջը | 1 |
| 1.13 | ես է ուղարկվել ստորադաս դատարան՝ պաշտպանական կողմի պահանջով | 2 |
| 1.14 | քաղաքացիական հայցի մասով պահանջը մերժվել է | 0 |
| 2 | մեղադրանքի կողմի բերած՝ մերժված վերաքննիչ բողոքների թիվը՝ | 110 |
| Ընդամենը՝ | | 188 |

Վերաքննիչ դատարանի բողոքարկված դատական ակտերի թիվը՝ 123

| Դ. | Վճռաբեկ դատարանում վարած գործերի վերաբերյալ | |
|--|---|----|
| 1 | վճռաբեկ դատարանում վարած գործերի թիվը՝ | 19 |
| որից | | |
| 1.1 | վճռաբեկ դատարանում ընթացիկ գործերի թիվը՝ | 9 |
| 1.2 | վճռաբեկ դատարանում հրաժարումների և փոխանցումների գործերի թիվը՝ | 1 |
| 1.3 | վճռաբեկ դատարանում ավարտված գործերի թիվը՝ | 9 |
| Վճռաբեկ դատարանում ավարտված գործերով արձանագրված արդյունքները | | |
| 1 | վճռաբեկ դատարանում պաշտպանական կողմի բերած՝ բավարարված բողոքների թիվը | 5 |
| այդ թվում՝ | | |
| 1.1 | արդարացվել է լրիվ | 2 |
| 1.2 | արդարացվել է մասնակի | 0 |
| 1.3 | կարճվել է ամբողջությամբ | 0 |
| 1.4 | կարճվել է մասով | 0 |
| 1.5 | արարքը վերաորակվել է ավելի մեղմ հողվածով | 0 |



| | | |
|------------------|---|----------|
| 1.6 | պատիժը մեղմացվել է | 0 |
| 1.7 | կիրառվել է ՀՀ ՔՕ 64-րդ հոդված | 0 |
| 1.8 | կիրառվել է ՀՀ ՔՕ 70-րդ հոդված | 0 |
| 1.9 | պատժից ազատվել է | 0 |
| 1.10 | քրեական պատասխանատվությունից ազատվել է | 0 |
| 1.11 | կիրառվել է համաներում | 0 |
| 1.12 | բավարարվել է նյութական և (կամ) դատավարական իրավունքի խախտման հիմքով այլ պահանջը | 1 |
| 1.13 | ես է ուղարկվել ստորադաս դատարան՝ պաշտպանական կողմի պահանջով | 2 |
| 1.14 | քաղաքացիական հայցի մասով պահանջը մերժվել է | 0 |
| 2 | մեղադրանքի կողմի բերած՝ մերժված վճռաբեկ բողոքների թիվը՝ | 0 |
| 3 | առանց քննության թողնված վճռաբեկ բողոքների թիվը՝ | 0 |
| Ընդամենը՝ | | 5 |

| Ե. | Հանձնման գործերի վերաբերյալ | |
|---|--|----|
| 1 | վարած հանձնումների թիվը՝ | 72 |
| որից | | |
| 1.1 | ընթացիկ հանձնումների թիվը՝ | 49 |
| 1.2 | հանձնման գործերով հրաժարումների և փոխանցումների թիվը՝ | 5 |
| 1.3 | ավարտված հանձնումների թիվը՝ | 18 |
| Հանձնման՝ ավարտված գործերով արձանագրված արդյունքները | | |
| 1 | կիրառված ժամանակավոր կալանավորումների թիվը՝ | 15 |
| որից | | |
| 1.1 | երկարացումը մերժված ժամանակավոր կալանավորումների թիվը՝ | 0 |
| 2 | ժամանակավոր կալանավորումների չկիրառման թիվը՝ | 1 |
| 3 | հանձնելու համար կալանավորումների թիվը՝ | 7 |
| որից | | |
| 3.1 | երկարացումը մերժված կալանավորումների թիվը՝ | 2 |
| 4 | հանձնելու համար կալանավորումների չկիրառման թիվը՝ | 2 |
| 5 | Նշում հանձնման արդյունքների վերաբերյալ | 16 |
| որից | | |
| 5.1 | մերժված հանձնումների թիվը՝ | 2 |
| 5.2 | թույլատրված հանձնումների վերաբերյալ | 9 |
| 5.3 | այլ | 5 |

| Կալանավորման բողոքարկումների և արձանագրված արդյունքների վերաբերյալ | | |
|---|--|----|
| 1 | առանց բողոքարկման կալանավորումների փոփոխման թիվը | 13 |
| 2 | առանց բողոքարկման կալանավորումների վերացման թիվը | 7 |
| 3 | կալանավորումների մերժումների թիվը | 5 |
| 4 | կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավի | 15 |



| | | |
|-----------------|---|------------|
| | նշանակումների թիվը՝ | |
| 5 | բողոքարկման արդյունքում գրավի նշանակումների թիվը՝ | 12 |
| 6 | կալանավորման բողոքարկումների թիվը | 50 |
| որից | | |
| 6.1 | կալանավորման որոշումների դեմ բավարարված բողոքների թիվը՝ | 28 |
| 6.2 | կալանավորման որոշումների դեմ մերժված բողոքների թիվը՝ | 104 |
| 7 | ձերբակալումից ազատվել է բողոքարկման արդյունքում | 21 |
| Ընդամենը | | 443 |





Հավելված թիվ 8
 ռազմավարական ծրագրի կատարման
 վերաբերյալ 2018թ. հաշվետվության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ²²
ՀՊԳ ՎԱՐԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՄ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
 Հաշվետու ժամանակահատված՝ 01.01.2018 - 31.12.2018թթ.

| Ա. | Հաշվետու ժամանակաշրջանում վարած գործերի թիվը | |
|-----------------|---|-------------|
| 1 | Հաշվետու ժամանակաշրջանում ներկայացուցչությունների թիվը | 1739 |
| այդ թվում՝ | | |
| 1.1 | քաղաքացիական գործերով ներկայացուցչությունների թիվը | 1077 |
| 1.2 | վարչական գործերով ներկայացուցչությունների թիվը | 108 |
| 1.3 | սահմանադրական գործերով ներկայացուցչությունների թիվը | 0 |
| 1.4 | տուժողի և այլ քրեական գործերով ներկայացուցչությունների թիվը | 550 |
| 2 | Հաշվետու ժամանակաշրջանում խորհրդատվությունների թիվը | 6534 |
| այդ թվում՝ | | |
| 2.1 | Հաշվետու ժամանակաշրջանում գրավոր խորհրդատվությունների թիվը | 2453 |
| 2.2 | Հաշվետու ժամանակաշրջանում բանավոր խորհրդատվությունների թիվը | 4081 |
| Ընդամենը | | 6595 |

| Բ. | Առաջին ատյանի դատարանում վարած գործերը | քաղ. | վարչ. | ընդ. |
|-----------------|---|------------|-----------|-------------|
| 1 | Առաջին ատյանի դատարանում ավարտված գործերի թիվը | 367 | 27 | 394 |
| 2 | Առաջին ատյանի դատարանում ընթացիկ գործերի թիվը | 508 | 34 | 542 |
| 3 | Առաջին ատյանի դատարանում հրաժարումների և փոխանցված գործերի թիվը | 106 | 11 | 117 |
| Ընդամենը | | 981 | 72 | 1053 |

²² Հաշվետվությունը կարող է պարունակել ծրագրային որոշ անճշտություններ:



| | | | | |
|-----------------|---|-------------|--------------|-------------|
| 4 | Հօգուտ վստահորդի կայացված վճիռների թիվը | 263 | 11 | 274 |
| այդ թվում՝ | | | | |
| ա) | ամբողջությամբ | 46 | 1 | 47 |
| բ) | մասնակի | 45 | 0 | 45 |
| 4.1 | Հաշտության համաձայնության հիմքով ավարտված գործերի թիվը | 19 | 0 | 19 |
| 4.2 | Հայցից հրաժարվելու հիմքով ավարտված գործերի թիվը | 22 | 0 | 22 |
| 5 | Ի վնաս վստահորդի կայացված և այլ դատական ակտերի թիվը | 103 | 16 | 119 |
| Գ. | Վերաքննիչ դատարանում գործերի թիվը | քաղ. | վարչ. | ընդ. |
| 1 | Վերաքննիչ դատարանում ավարտված գործերի թիվը | 73 | 20 | 93 |
| 2 | Վերաքննիչ դատարանում ընթացիկ գործերի թիվը | 14 | 8 | 22 |
| 3 | Վերաքննիչ դատարանում հրաժարումների և փոխանցված գործերի թիվը | 3 | 1 | 4 |
| Ընդամենը | | 90 | 29 | 119 |
| 4 | Հօգուտ վստահորդի բավարարված (մերժված) վերաքննիչ բողոքների թիվը | 38 | 12 | 50 |
| այդ թվում՝ | | | | |
| ա) | ամբողջությամբ | 35 | 10 | 45 |
| բ) | մասնակի | 5 | 3 | 8 |
| 4.1 | Հաշտության համաձայնության հիմքով ավարտված գործերի թիվը | 0 | 0 | 0 |
| 5 | Ի վնաս վստահորդի բավարարված (մերժված) բողոքների և այլ դատական ակտերի թիվը | 34 | 8 | 42 |
| Դ. | Վճռաբեկ դատարանում գործերի թիվը | քաղ. | վարչ. | ընդ. |
| 1 | Վճռաբեկ դատարանում ավարտված գործերի թիվը | 1 | 1 | 2 |
| 2 | Վճռաբեկ դատարանում ընթացիկ գործերի թիվը | 0 | 0 | 0 |
| 3 | Վճռաբեկ դատարանում հրաժարումների և փոխանցված գործերի թիվը | 1 | 0 | 1 |
| Ընդամենը | | 2 | 1 | 3 |
| 4 | Հօգուտ վստահորդի բավարարված (մերժված) վճռաբեկ բողոքների թիվը | 0 | 0 | 0 |
| այդ թվում՝ | | | | |
| ա) | ամբողջությամբ | 0 | 0 | 2 |
| բ) | մասնակի | 0 | 0 | 0 |
| 4.1 | Հաշտության համաձայնության հիմքով ավարտված գործերի թիվը | 0 | 0 | 0 |
| 5 | Ի վնաս վստահորդի բավարարված (մերժված) բողոքների և այլ դատական ակտերի թիվը | 1 | 1 | 2 |



| Ե. Տուժողի և այլ քրեական գործերով ներկայացուցչությունների թիվը | | |
|---|---|------------|
| այդ թվում՝ | | |
| ա) | տուժողի գործերով ներկայացուցչությունների թիվը | 381 |
| բ) | այլ քրեական գործերի թիվը | 169 |
| 1 | Տուժողի և այլ քրեական գործերով ավարտված գործերի թիվը | 296 |
| 2 | Տուժողի և այլ քրեական գործերով ընթացիկ գործերի թիվը | 210 |
| 3 | Տուժողի և այլ քրեական գործերով հրաժարումների և փոխանցված գործերի թիվը | 44 |
| Ընդամենը | | 550 |

| Զ. Տուժողի և այլ ավարտված քրեական գործերով արձանագրված արդյունքները | | |
|--|--|------------|
| այդ թվում՝ | | |
| ա) | դատարան ուղարկված գործերի թիվը | 9 |
| բ) | մեղադրական դատավճիռների թիվը | 14 |
| գ) | ամբողջությամբ բավարարված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը | 20 |
| դ) | մասով բավարարված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը | 4 |
| ե) | վերացված կարճումների թիվը | 0 |
| զ) | քրեական հետապնդում չիրականացնելու (դադարեցնելու) վերացումների թիվը | 1 |
| է) | նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու վերացումների թիվը | 3 |
| ը) | դատական որոշման կատարման հետ կապված՝ ամբողջությամբ բավարարված բողոքների թիվը | 16 |
| թ) | դատական որոշման կատարման հետ կապված մասով բավարարված բողոքների թիվը | 1 |
| ժ) | արձանագրված այլ արդյունքների թիվը | 216 |
| ի) | տուժողի գործերով բավարարված քաղաքացիական հայցերի (վնասի հատուցումների) թիվը | 13 |
| որից՝ | | |
| ա) | բավարարվել է ամբողջությամբ | 6 |
| բ) | բավարարվել է մասով | 7 |
| Ընդամենը | | 297 |

| Է. Սահմանադրական դիմումներով գործերի թիվը | | |
|--|--|---|
| 1 | ՍԴ կողմից վարույթ ընդունված դիմումների թիվը | 0 |
| 2 | Օրենքը հակասահմանադրական ճանաչելու վերաբերյալ որոշումների թիվը | 0 |



| | | |
|---|--|---|
| 3 | Մերժված ՍԴ դիմումների թիվը | 0 |
| 4 | ՍԴ կողմից վարույթ չընդունված և այլ դիմումների թիվը | 2 |

| Ը. | Խորհրդատվության թիվը | |
|--|----------------------|------|
| ա) Բանավոր խորհրդատվությունների թիվը՝ ըստ գործի տեսակների | | |
| | քաղաքացիական | 2475 |
| | վարչական | 305 |
| | քրեական | 860 |
| | սահմանադրական | 1 |
| բ) Գրավոր խորհրդատվությունների թիվը՝ ըստ գործի տեսակների | | |
| | քաղաքացիական | 1901 |
| | վարչական | 258 |
| | քրեական | 292 |
| | սահմանադրական | 2 |

Ծանոթություն.

Հաշվետու ժամանակահատվածում՝
 Բավարարված դիմումների թիվը՝ 8251
 Մերժված դիմումների թիվը՝ 4
 Դադարեցված որոշումների թիվը՝ 17
 Ընդամենը 8272





Հավելված թիվ 9
 ռազմավարական ծրագրի կատարման
 վերաբերյալ 2018թ. հաշվետվության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ²³
ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ ԴԻՄԱԾ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐՆ՝
ԸՍՏ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ²⁴

| № | Կատեգորիայի անվանումը | «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածը, մասը և կետը | Քաղաքացիների թիվը |
|----------|---|---|--------------------------|
| 1 | Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներ | 41-5-1 | 104 |
| 2 | 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներ | 41-5-2 | 1071 |
| 3 | դատապարտյալներ | 41-5-3 | 1053 |
| 4 | ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ Օ-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներ | 41-5-4 | 534 |
| 5 | Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներ | 41-5-5 | 198 |
| 6 | գործազուրկներ | 41-5-6 | 1303 |
| 7 | միայնակ բնակվող կենսաթոշակառուներ | 41-5-7 | 581 |

²³ Հաշվետվությունը կարող է պարունակել ծրագրային որոշ անճշտություններ:

²⁴ սույն հաշվառումն իրականացվում է քաղաքացիական, վարչական կամ սահմանադրական գործերով:



| | | | |
|------------------|---|---------|-------------|
| 8 | առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք | 41-5-8 | 5 |
| 9 | փախստականներ | 41-5-9 | 31 |
| 10 | Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր ապաստան ստացածներ | 41-5-10 | 5 |
| 11 | անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում | 41-5-11 | 2169 |
| 12 | հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք | 41-5-12 | 73 |
| 13 | օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձինք | 41-5-13 | 0 |
| 14 | Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողները | 41-5-14 | 1 |
| 15 | խոշտանգումից տուժած անձանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով | 41-5-15 | 0 |
| 16 | «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընտանիքում բռնության ենթարկված անձինք | 41-5-16 | 0 |
| Ընդամենը՝ | | | 7180 |



Ծանոթագրություն.

Մերժված դիմումների ընդհանուր թիվը՝ 21, որից

1. Ըստ 41-րդ հոդվածի 6-րդ մասի 2-ին կետ՝ 1
2. ՄԻԵԴ կամ այլ գործով՝ 2
3. Կարգավիճակ չունենալու հիմքով՝ 17
4. Իրավական հիմքերի բացակայությամբ՝ 1

ՀՊԳ դիմած քաղաքացիների ընդհանուր թիվը 7201, այդ թվում՝

ՀՊԳ դիմած քաղաքացիների՝ բանավոր դիմումների թիվը՝ 7180

ՀՊԳ դիմած քաղաքացիների՝ մերժված դիմումների թիվը՝ 21

